7 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 157 (4775)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651

# Շուշիի թաքնված հմայքն ու ակնհայտ հոգսերը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Շուշի




Ինչ-որ մի անտես, թաքնված հմայք ունի Շուշին, հատկապես նոր կառուցվող շենքերն են սիրուն՝ կապտավուն եւ սպիտակ երանգներով, որոնք ինչ-որ խորհրդավոր ու նրբագեղ մի ստվեր են նետում քաղաքի վրա առավոտ վաղ ու մայրամուտին, նոր այցելուին մտովի խոստովանել տալիս, որ ուրիշ ոչ մի փոքրիկ քաղաքում կապտասպիտակ այս երանգը եւ մեծ քաղաքներին հատուկ ուրբանիստական շունչը չեն տեսել ու չեն զգացել միասին, ու եթե չլսվեր շուշեցու բարբառը՝ անգամ մի պահ Շուշիի նորակառույց անկյունները կարելի էր շփոթել եվրոպական մեծ քաղաքների անկյունների հետ: Սա կարելի է եւ հաճոյախոսություն անվանել, եւ ընդհակառակը, որովհետեւ, օրինակ՝ Շուշիի երկրագիտական թանգարանի տնօրենը կգերադասեր նկարում երեւացող կապտավուն նորակառույցների փոխարեն տեսնել մինչ այս կառույցներն այստեղ կանգնած Շուշիի հին ու կոլորիտային շենքերից մեկը, որ չգիտես ինչու քանդեցին:

Քաղաքն ապրում է հետտոնական ընդարմությամբ, տոնի փշուրները դեռ ներկա են՝ եռագույն դրոշներն ու եռագույնի երեք գույներով երեքական դրոշներն ամենուր են: Հյուրանոցներում եւ խանութներում մարդիկ խոսում են, թե որքան շատ հյուր կար քաղաքում Արցախի անկախության քսանամյակին: Իմ տանտիրուհին տիկին Նաիրան, սակայն, այլ բան է ասում. որ Շուշի սկսել են ավելի հաճախ գալ ընդհանրապես, որ նրբաքիմք տուրիստներն ու եկվորները սկսել են Շուշին գերադասել Ստեփանակերտից, որ այս քաղաքի գեղեցկությունը, նրբագեղությունն ու խաղաղությունը գրավում է նրանց. հատկապես գալիս են ուրբաթ օրվանից՝ եռօրյա հանգստի, եւ երկուշաբթի վերադառնում: Ու այդ պատճառով տիկին Նաիրան իր փոքրիկ ու հարմար սենյակները նորոգել է ու փորձում է հյուրատան նիստուշարժ անել՝ եթե մեծ հյուրանոցները չխեղդեն, գուցե մի բան ստացվի:

*Տես էջ 2*

# Ստամբուլի բարբարոսական գիշերվա 56-րդ տարելիցը

1955 թ. սեպտեմբերի 6-ի լույս 7-ի գիշերը դժոխային էր Ստամբուլի հույն, հայ եւ հրեա քաղաքացիների համար:

Բոլոր լրատվամիջոցները շարունակ խոսում են 2011-ի սեպտեմբերի 11-ի տարելիցի մասին, մինչդեռ գրեթե աննկատ մնացող 1955-ի իրադարձությունը շատ ավելի լուրջ հետեւանքներ ունեցավ, քանզի դա քեմալական հանրապետության մոլեռանդ թուրքացման ծրագրի վերջակետն էր, որը հանգեցրեց հայերի եւ հույների մի ամբողջ սերնդի արտագաղթին:

1915-ի ցեղասպանությունից քառասուն տարի անց թուրքական պետությունը գործի էր դնում մի դիվային ծրագիր (այն սկզբնապես նախատեսված էր 1953-ի՝ Կոստանդնուպոլսի գրավման 500-ամյակի համար), որպեսզի «ծովը լցնի» Ստամբուլում մնացող վերջին հույներին: Սեպտեմբերի լույս 7-ի գիշերը գերազգայնականների դրդմամբ մոլեռանդների հրոսակները, պատրվակ դարձնելով Սալոնիկում Աթաթուրքի տան առջեւ ռումբի (որն իրականում տեղադրել էր MIT-ի անդամներից մեկը) պայթյունը, ավտոբուսներով Ստամբուլ մեկնեցին «հույներին ջարդելու»:

«Գործողության» հրահրիչները կորցրին ամբոխների վերահսկողությունը, եւ հարբած ու բորբոքված հարձակվողները կարգի պահապանների անտարբեր հայացքների ներքո տապանում ու բռնաբարում էին, ավերեցին ազգային փոքրամասնությունների տներն ու խանութները, կողոպտեցին եկեղեցիները... Մի քանի մանր հանցագործներից բացի, ոչ ոք չպատժվեց խժդժությունների համար: Ռումբը պայթեցրած Օքթայ Էնգինը մի քանի տարի անց պարգեւատրվեց: Նա դարձավ ոստիկանապետ եւ ապա անվտանգության ծառայությունների ղեկավար:

Հետագա տարիներին բազմաթիվ հույներ եւ հայեր վերջնականապես լքեցին երկիրը:

Ներկայումս այս կամ այն երկրից ներողություն պահանջող Թուրքիան մինչեւ օրս ներում չի հայցել ֆիզիկական եւ հոգեբանական խեղիչ բռնության ենթարկված իր քաղաքացիներից: 50-րդ տարելիցի առիթով 2005-ին Ստամբուլում հիշյալ դեպքերը պատկերող լուսանկարչական ցուցահանդեսն ավերեցին գերազգայնականները կարգի պահապանների անտարբերության պայմաններում:

ԺԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՍԻՐԱՊՅԱՆ
Չոպանյան ինստիտուտի
հիմնադիր նախագահ
Ալֆորվիլ, Ֆրանսիա

# Թուրքիա-Իսրայել հարաբերությունները՝ սառեցված

Այսօր, ըստ թուրքական ղեկավարության հայտարարությունների, Թուրքիայի տարածքը պետք է լքեն երկրորդ քարտուղարը եւ ավելի բարձր աստիճանով իսրայելական դիվանագետները:

Թուրքիան Իսրայելի դեմ պատժամիջոցների դիմեց, երբ Իսրայելը հրաժարվեց ներողություն խնդրել նախորդ տարի Գազայի հատվածի ուղղությամբ շարժվող թուրքական «Ազատության տորմիղի» վրա հարձակման համար:

Իսկ մինչ այդ՝ երեկ, Թուրքիայի վարչապետ Էրդողանը Անկարայում տեղի ունեցած ասուլիսում հայտարարել է, որ ամբողջությամբ սառեցվում են Իսրայելի հետ բոլոր առեւտրային ու ռազմական հարաբերությունները, այդ թվում՝ առկախելով ռազմական արդյունաբերության ոլորտում ունեցած համագործակցությունը:

Թուրքական լրատվամիջոցները տեղեկացնում են, որ Էրդողանը նաեւ զգուշացրել է նախապատրաստվող հակաիսրայելական նոր պատժամիջոցների կիրառության մասին, շեշտելով, որ հարաբերությունների սառեցմանը կհետեւեն «միջոցառումներ», անգամ հնարավոր է Էրդողանի այցելություն Գազայի հատված:

Ա. Հ.

# Զինվորին հասցրել են խելագարության. հարուցվել է քրեական գործ

20-ամյա Հովհաննես Վարդանյանը 14 ամիս ծառայել է Ասկերանի զորամասում: Հայրը՝ Վարդան Վարդանյանը, պատմում է, որ որդին մինչ ծառայությունը հոգեկան խնդիրներ չի ունեցել, եղել է սպորտսմեն ու ցանկացել է բանակում ծառայել: Ծառայության ժամանակ, մի անգամ որդու հետ հեռախոսազրույցում հայրը իմացել է, որ Հովհաննեսը սպաներից մեկի հետ վիճել է: Կարծում էր, որ դա սովորական, անցողիկ երեւույթ է: Որոշ ժամանակ անց, երբ նա կրկին զանգում է որդու հետ խոսելու, զինվորներից մեկը պատմում է, որ Հովհաննեսն արդեն 9 օր գտնվում է Նորքի հոգեբուժարանում: Նորքի հոգեբուժարանում զարմանում են, թե ինչո՞ւ են հարազատները 9 օր տղային անտերության մեջ թողել, այնինչ հայրը տեղյակ չի եղել: Նա զանգահարում է հրամանատարին, ում հեռախոսահամարը պարզ լսվում է սոցիալական բոլոր ցանցերում եւ լրատվական կայքերում տարածված տեսանյութում, եւ բացատրություն պահանջում, թե ինչու է իր որդին ընկել հոգեբուժարան, թե ինչու ինքը չգիտի, թե ինչ է կատարվել իր զինվորի հետ, ինչին ի պատասխան հրամանատարն ասում է, որ «էլ ստեղ չզանգի, մոռանա էս հեռախոսահամարն», ու անջատում է բջջայինը: «Չենք լռելու» երիտասարդական կազմակերպությունը երեկ տարածել է տեսանյութ, որտեղ նկարահանել է Հովհաննեսին Նորքի հոգեբուժարանում:

Գործի առնչությամբ ՀՀ զինվորական դատախազ Գեւորգ Կոստանյանի ցուցումով հարուցվել է քրեական գործ՝ ՔՕ 375-րդ հոդվածի 1-ին մասով: Այն կուղարկվի ՊՆ քննչական ծառայության համապատասխան ստորաբաժանում՝ նախաքննություն անցկացնելու: Զինվորին խելագարության հասցրել են սպաները՝ կիրառելով բռնություն նրա նկատմամբ: Չի բացառվում, որ երիտասարդը գուցե շատ փոքր, սակայն հոգեկան խնդիրներ է ունեցել: Այս պարագայում պետք է պատժվեն ոչ միայն սպաները, ովքեր բռնություն են կիրառել, այլեւ բժշկասոցիալական փորձագիտական հանձնաժողովի անդամները, եթե ապացուցվի, որ երիտասարդը նախապես ունեցել է առողջական խնդիրներ:

Գեւորգ Կոստանյանի մեկ այլ տեղեկացմամբ՝ զինծառայող Աղասի Աբրահամյանի մահվան կապակցությամբ հարուցված քրեական գործի շրջանակներում եւս երկու սպա է ձերբակալվել:

Հ. Հ.

# Ամենայն հայոց կաթողիկոսն ընդունեց «Արմենիա» առագաստանավի անձնակազմին




Սեպտեմբերի 6-ին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում **Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսն** ընդունեց «Արմենիա» առագաստանավի անձնակազմին՝ գրող, հրապարակախոս Զորի Բալայանի ղեկավարությամբ:

Նորին սրբությունը գոհունակություն հայտնեց, որ նավարկությունը բարեհաջող ընթացք է ունեցել: «Տեղյակ ենք այն խանդավառությանը, որ ձեր այցելություններով ստեղծում էիք հայ համայնքներից ներս՝ հպարտության զգացում փոխանցելով մեր զավակներին ձեր քաջարի այդ արարքով: Նմանատիպ երեւույթները նոր ոգեւորություն են ներարկում մեր զավակների հոգիներից ներս եւ լիցք են հաղորդում նրանց՝ շարունակելու իրենց ազգապահպան գործունեությունը», - նշեց Վեհափառ հայրապետը:

Հանդիպումից հետո Ամենայն հայոց կաթողիկոսը Մայր տաճարում «Պահպանիչ» աղոթքով օրհնեց Իջման ս. սեղանի առջեւ ծնրադրած նավագնացներին՝ մեկ անգամ եւս մաղթելով նորանոր հաջողություններ իրենց հետագա ծրագրերում:

# Բոլորը Ղարաբաղից են խոսում, բացի Ալիեւից

Հարավային Կովկասի, նաեւ Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Ֆիլիպ Լեֆորն իր տարածաշրջանային այցը սկսեց Բաքվից: Դեռեւս սեպտեմբերի 5-ին Լեֆորը հանդիպեց Ադրբեջանի նախագահ Ալիեւի հետ: Հանդիպմանն, ըստ ադրբեջանական պաշտոնական հաղորդագրության, Ալիեւը հույս է հայտնել, թե «ԵՄ-ն այսուհետեւ էլ կընդլայնվի»:

Թե հատկապես ինչու է Ալիեւը հույս հայտնում Եվրոմիության ընդլայնման առնչությամբ, ժողովրդավարություն կերտելու ճանապարհի սկզբին կանգնած Ադրբեջանի նախագահի պարագայում առանձնակի կասկածներ չի հարուցում: Ամեն դեպքում, միայն ընդլայնման բարեմաղթանքներով չէ, որ սահմանափակվել է Լեֆոր-Ալիեւ քննարկումը, որից մանրամասներ չեն հաղորդվում: Նրանք խոսել են նաեւ ղարաբաղյան խնդրից:

Այս թեման շոշափվել է նաեւ Ադրբեջանի Միլի մեջլիսի նախագահ Օգթայ Ասադովի հետ հանդիպմանը, որի ընթացքում Ասադովն, ամենայն հավանականությամբ առանց կարմրելու ներկայացրել է Եվրոպայի ժողովրդավարական ինստիտուտների հետ համագործակցության ադրբեջանական «իղձերը»: Լեֆորն էլ առանձնակի ժլատ չի գտնվել, ըստ պետական լրատվական գործակալության, «գոհունակություն հայտնելով Ադրբեջանի բազմակողմանի զարգացման» առումով:

ԵՄ հատուկ ներկայացուցչի հետ Բաքվում հանդիպել է նաեւ փոխարտգործնախարար Մահմուդ Մամեդկուլիեւը, քանի որ արտգործնախարար Էլմար Մամեդյարովը գտնվում էր Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում՝ մասնակցելու Չմիավորման շարժման 50-ամյա հոբելյանին նվիրված միջոցառմանը: Ջեռքի հետ ադրբեջանական արտաքին գերատեսչությունն իր հանրությանը «տեղեկացրել» է նաեւ, որ Լեֆորը հանդիպել է Լեռնային Ղարաբաղի «ադրբեջանական համայնքի ներկայացուցիչների» հետ:

Ինչեւէ, Մամեդյարովը թեեւ չի հանդիպել Ֆիլիպ Լեֆորին, սակայն Բելգրադում հասցրել է կրկին հնչեցնել տարածաշրջանի իրավիճակի ադրբեջանական թեզն այն ձեւակերպմամբ, թե «Հայաստանն է խոչընդոտում տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատմանը», կարծես թուրքը պատյանից հանած ու գլխավերեւում ճոճողը Ալիեւ կրտսերը չէ: Մամեդյարովի ղեկավարած գերատեսչությունն էլ Բելգրադում գտնվող իր ղեկավարին թերեւս տեղյակ չի պահել, որ Ալիեւի մտշապես պտտեցրած ձայնապնակը, պարզվում է, մնում է Ադրբեջանի նախագահի գրասենյակում, որի հասարակական-քաղաքական հարցերով բաժնի ղեկավար Ալի Հասանովը անհամբեր է «փոփոխելու ստատուս քվոն»:

Հասանովի կողմից ղարաբաղյան խնդրին անդրադառնալու հանգամանքը, նաեւ այլ մանր-մունր չինովնիկների բարձրաձայնումներն այնպիսի տպավորություն են ստեղծում, թե Ալիեւ կրտսերը չի ցանկանում կամ, որ ավելի հավանական է, վախենում է անձամբ խոսել խնդրից, այլ այլոց բերանով «հող է շոշափում», իսկ միջազգային հանրությունը, ցավոք, համբերատար անտարբեր է ձեւանում փոքր տարածաշրջանում կրկին պատերազմ սանձազերծելու հիստերիկ կոչերի նկատմամբ:

Հասկանալի է, որ նավթային իրողությունները «խցանել են» եվրոպական «ժողովրդավարությունների» ու մարդու իրավունքների արժեքների հետեւորդների դատապարտումները: Ամեն դեպքում, գոնե տարածաշրջանային այցելությունների շրջանակներում եվրոներկայացուցիչները հարկ է, որ հասցեագրեն «խաղաղ լուծման այլընտրանք չունենալու կոչերը»:

Ամեն դեպքում, այսօր էլ ԵՄ Հարավային Կովկասում հատուկ ներկայացուցիչ Լեֆորը կլինի Հայաստանում՝ հանդիպումների հավանաբար նույնանման օրակարգով:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Գալուստ Սահակյանը «WikiLeaks»-ին չի հավատում

Նման հայտարարություն երեկ կատարեց ԱԺ ՀՀԿ խմբակցության ղեկավարը՝ հավելելով, որ կայծն իր առջեւ խնդիր ունի ընտրություններից առաջ նոր փոքրիկ ստեղծել տարբեր ոտնահետքերի համար: Անդրադառնալով «WikiLeaks»-ի հրապարակմանը, ըստ որի 2008թ. նախագահական ընտրություններում Լեւոն Տեր-Պետրոսյանը մինչեւ 35 տոկոս ձայն է հավաքել, սակայն երկրորդ փուլ չի եղել, հետեւաբար Սերժ Սարգսյանն ընտրություններում չի հաղթել, **Գալուստ Սահակյանն** ասաց, որ հասարակության նկատմամբ հարգալից վերաբերմունք չէ, եթե «WikiLeaks»-ն է որոշում, թե ով է հաղթել ընտրություններում: «Ինձ համար ավելի լավ է մեր մամուլի աղավաղված լուրերը մեկնաբանել, քան խաբարված «WikiLeaks»-ի», ասաց Սահակյանը: ՀՀԿ-ական գործիչը չի ընդունում «WikiLeaks»-ի դիտարկումը, որ Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը հակասություններ ունեն: «Նրանք պատերազմի երկար ճանապարհ են անցել, եւ նման մարդիկ կարող են միայն համատեղ գործել»: Սահակյանը չի հավատում, որ հայ պաշտոնյաներից որեւէ մեկը կարող էր օտարերկրյա դիվանագետների հետ անկեղծանալ: Նա ասաց, որ անձամբ ճանաչում է Սամվել Նիկոյանին եւ չի կարծում, որ նա կարող էր նման բան անել: Իսկ նրանց, ովքեր օտարերկրյա դիվանագետների հետ Հայաստանի մասով զրույցներ են ունեցել, Սահակյանը բնութագրեց ոչ լավ հայեր:



Սահակյանը վիրավորվել է, երբ «WikiLeaks»-ը ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին բնորոշել է «Հին աղվես»: «Հին աղվեսներին թող որոնեն իրենց մոտ»: Անդրադառնալով ՀԱԿ-կոալիցիա երկխոսությանը՝ Սահակյանն ասաց, որ երկխոսությունը շարունակվում է: Երկխոսության պայմանները չեն կարեւոր, այլ թեմաները, որոնց մասին այսօր խոսում են իշխանական եւ ընդդիմադիր բոլոր ուժերը: Երկխոսող կոալիցիայի աշխատանքային խմբի ղեկավար **Դավիթ Հարությունյանը** երկխոսությունը նմանեցրել էր տանգոյի՝ հավելելով, որ այն մենակ չեն պարում: Սեպտեմբերի 9-ին սպասվող հանրահավաքից առաջ ՀԱԿ անդամ **Լյուդմիլա Սարգսյանն** ասել էր, որ կլինեն ջրբաժան ու ցասում, եւ եթե տանգոն իշխանությանը դուր չի գալիս, ապա իրենք տանգի կպարեն: Այս առնչությամբ Սահակյանն ասաց, որ եթե հայերն են պարելու, ավելի լավ է՝ տնգի պարեն, քան տանգո, քանի որ տնգին ավելի ազգային է:

Սահակյանն արդեն կռահում է, թե սեպտեմբերի 9-ին ՀԱԿ հանրահավաքում ինչպիսի ելույթներ են հնչելու: «Նորից վերադառնալու են ավազակապետության, որ «հեսա գալու ենք», «հեսա եկանք», «դուք տեսեք՝ ինչ ենք անելու», դրա համար իբր թե առկախեցին: Իբր թե էնքան ժողովրդավարական են դարձել, պիտի ժողովրդից հարցնեն, որ հետո փորձեն երկխոսել: Նախընտրական ընթացք է, ձեւեր թափել, պոպուլիզմով առաջ գնալ, դրանք բոլորն էլ ընդունելի են»:

Հ. Հ.

## Շուշիի թաքնված հմայքն ու ակնհայտ հոգսերը

*1-ին էջից*

**Իսկ հյուրանոցային բիզնեսը խթանվում է Շուշիում՝ միայն Արցախի քառամյակի նախօրեին երկու նոր հյուրանոց է բացվել, սա խոսում է այն մասին, որ գուցե մի բան դուրս գա այն ծրագրից, ըստ որի Շուշին մինչեւ 2020 թվականը մշակույթի եւ զբոսաշրջության կենտրոն է նախատեսվում դարձնել: Այս փոքրիկ քաղաքը, որ պահում է Վարանդայի մելիքների ժամանակի արքունական նիստուկացի հիշողությունը, որ 19-րդ դարի վերջին վաթսուն հազար բնակչությամբ Այսրկովկասի երրորդ քաղաքն է եղել, որը հաղթահարել է զանազան եւ ամեն տեսակի փանախաների, իսկ ռուս-պարսկական պատերազմից հետո մշակութային եւ արհեստագործական մի առեւտրաշահ կենտրոն էր, 1992 թվականի մայիսին կրկին ճանապարհ ընկավ իր անցյալի փառավոր ուղիներով, եւ երկար ճանապարհի է պատրաստվել:**

**Այն, ինչ մենք ասում ենք, սակայն, շուշեցուն կարող է մի քիչ վերացական թվալ, քանի որ բուն շուշեցին, տնից տուն եւ հասկապես նշանակալից առիթներով արտահայտվող անձնական եւ զանգվածային հպարտության զգացումից զատ թաթախված է ամենօրյա չվերջացող պրոբլեմների մեջ, ու չնայած բոլորն են խոստովանում, որ մի հինգ-վեց տարի առաջվա համեմատ, այո, Շուշին զարգացում ապրել է, բազմաթիվ նոր շենքեր են շահագործման հանձնվել, «Հայաստան» համահայկական հիմնադրամն է մի շարք հաստատություններ նորոգում ու կառուցում, սակայն սովորական շուշեցու հոգսը բոլորովին էլ չի նվազում: Այնպես որ՝ Շուշիի պրոբլեմներն անպակաս են. նախ եւ առաջ խմելու ջուրը, որ երկու-երեք օրը մեկ է հասնում սպառողին, սպառողն էլ դա հավաքում է համապատասխան տարաներում, որ օրվա հոգսը հոգա: Մյուս պրոբլեմը ճանապարհներին են, կարեւոր եւ կենտրոնական լավ սարքված մի քանի ճանապարհների կողքին՝ Շուշիի թաղամասերը կապող փողոցները հիշեցնում են սովորական գյուղական եւ չասֆալտված, երբեմն անանցանելի հողուղիներ: Քաղաքում բազմաթիվ են քանդված շենք-շինությունները, որոնք տխալ տարածքին լքյալ գոտու երեւույթն են տալիս: Գործազրկությունը մշտական վտանգ ունի իր մեջ՝ արտագնա աշխատանքի մեկնողների նոր հոսքերի ստեղծման առումով, իսկ այս զանգվածը եւ ուսանողների մի շերտ տարեցտարի լրացնում են ավելացող այն մարդկանց թիվը, որոնք ունեցած բնակարանների դռները փակելով՝ մեկնում են երկար տարիներով: Այստեղից էլ Շուշիի ամենակարեւոր պրոբլեմներից մեկը՝ փակված բնակարաններ եւ առանձնատներ, հողատարածքներ, որոնք տարիներով տիրոջ շունչ չեն զգացել՝ արգելակելով Շուշիի զարգացումը, քանի որ, ինչպես Շուշիի քաղաքապետն էր ասում, Շուշիում բաշխելու տարածք, բնակարան այլեւս չկա, բոլորն արդեն բաշխված են: Քաղաքացիների կարծիքով՝ նախկին քաղաքապետը փորձել է դասարկ, բայց տեր ունեցող տների եւ տարածքների օգտագործման օրենսդրական ու գործնական ուղիներ փնտրել, ու գուցե դա էլ պատճառներից մեկն է եղել նրա պաշտոնավարման ավարտի, քանի որ այդպիսի տներ եւ տարածքներ ոչ միայն շուշեցի, այլեւ ստեփանակերտցի եւ երեւանցի շատ հզորներ ունեն, նրանց նախկին քաղաքապետը խիստ զայրացրած է եղել:**

**Բոլոր այս, եւ մի շարք այլ պրոբլեմների մասին զրուցել ենք Շուշի ներկա քաղաքապետ Կարեն Ավագիմյանի հետ, որն այս հարցերի պատասխանը որոշ առումով գիտեր, այդ մասին մեր հետագա հրապարակումներում կպատմենք: Ասենք առայժմ, որ փակ տարածքների վերաբերյալ Շուշիի սովորական քաղաքացիները, չիմանալով գուցե օրենսդրությունը սեփականության իրավունքի մասին, շատ արմատական առաջարկներ էին անում, թե՝ թող փողը տան, հետ վերցնեն սեփականատերերից, եթե իրենք չեն օգտագործում, մանավանդ՝ չտաքացվող բնակարանները ձմռանը խնդիրներ են առաջացնում, կծել-դրել են որ ինչ: Մյուս առաջարկը այն էր, որ պարտադրեն տների բացակա սեփականատերերին միջինում ընտանիքի ծախսի չափով կոմունալ վարձեր մուծել, որ քաղաքն էլ կարողանա իր խնդիրները լուծել. «Էս չորս հազար բնակիչով քաղաքը հո կրակը չի՞ ընկել բացակա երեսուն տոկոսի ձեռքը», ասում էին շուշեցիք: Օրինակ՝ մի շենք կար, որ տրված էր Արցախի գրողների միությանը, մի քանի անգամ հրդեհ է ընկել՝ մի կերպ հանգցրել են, ոչ տերերը գալիս են, ոչ շիրություն են անում:**

**Մինչեւ տարվա վերջ նորություն կլինի Շուշիում՝ մշակույթի նախարարությունը կտեղափոխվի Շուշի, նորոգվող Մարիամյան կրթական հաստատության շենք, իսկ եկողմյուս տարի դասական համակարգն աստիճանաբար կտեղափոխվի Շուշի, Երեւանի ագրարային համալսարանի այժմ կառուցվող մասնաճյուղում տեղացի ուսանողները կսովորեն: Ֆրանսահայ բարերարները արհեստագործական ուսումնարան են սկսել կառուցել՝ այս կարգի բազմաթիվ ծրագրեր կան, մի մասն էլ արդեն իրականացվում է: Քաղաքի կյանքի ցուցիչը սովորաբար աշակերտներն են լինում, դրանց թիվը վեց հարյուրն է, այնպես որ՝ այս թվի վրա եթե կառուցենք բնակչության թվի վերաբերյալ ոչ պաշտոնական մեր պրոգնոզները եւ կանխավ չհավատանք քաղաքի ղեկավարության ասած չորս հազարին, էլի այդ չորս հազարը կստացվի, չհաշված, որ Շուշիում այսօր շատ են դրսեկները, նաեւ Երեւանից եւ Ստեփանակերտից եկած վարձու աշխատողները: Այս բոլորի հետ միասին՝ շուշեցիներից շատերի հետ մեր զրույցները տպավորություն էին ստեղծում, որ հասարակ շուշեցին քաղաքը վերակառուցելու, զարգացնելու խնդիրն իրենը չի համարում նաեւ, ինչպես նկարիչ Հովիկ Գաստարյանն էր ասում՝ «պետությունը մենք ենք, սովորական մարդիկ» կարգախոսը նրանցից կիլոմետրով հեռու էր մնացել, եւ դրա համար մի շարք պատճառներ կային:**

**Ընդհանուր այս տեղեկությունները փոխանցելով Շուշի այցելության ընթացքից, խոստանանք սակայն, որ առաջիկայում ավելի համակարգված կպատմենք Շուշիի, նրա մարդկանց եւ քաղաքի հոգսերի մասին:**

**ՄԵԿ ԳԼՈՒԽ, ԵՐԿՈՒ ՁԱՅՆ**

## Եվրոմիության շահերն «անմխնելի» են... կամ բավականին երկիմաստ

**Այս օրերին տարածաշրջանային այցով ինչպես Ադրբեջան, այնպես էլ Հայաստան է այցելում Եվրոմիության Հարավային Կովկասում հատուկ ներկայացուցիչ Ֆիլիպ Լեֆորը: Նա Բաքվում, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, հանդիպումներից մեկում գոհունակություն է հայտնել Ադրբեջանի «բազմակողմանի» առաջընթացի առնչությամբ այն դեպքում, երբ Եվրոմիության Մշտական խորհուրդը հրապարակել է այդ տեսակետի հետ բնավ էլ նույնականություն չունեցող ԵՄ-ի հայտարարության վերջնական նախագիծը՝ Ադրբեջանում մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների ու իրավունքի գերակայության մասին:**

**Ըստ ԵՄ-ի պաշտոնական կայքէջի, հայտարարությամբ նշվում է, որ ԵՄ-ն մտահոգություն է հայտնում. մասնավորապես, 2011-ի օգոստոսի 11-ին Բաքվում Խաղաղության ու ժողովրդավարության ինստիտուտի գրասենյակի ոչնչացման առնչությամբ: Եվրոմիության մտահոգությունն է առաջացնում այն հանգամանքը, որ այդ ամենը տեղի է ունեցել առանց դատարանի որոշման:**

**Խոստանալով հետեւողական լինել այս հարցում՝ Եվրոմիությունն, ըստ հայտարարության, մտահոգ է մնում Ադրբեջանում քաղաքական բանտարկյալների վիճակի առումով, հիշատակելով, որ հատկապես մտահոգիչ է 2011-ի օգոստոսի 25-ին ձերբակալված ու մինչեւ 3 տարվա տարբեր պատժաժամկետներով դատապարտված 6 ցուցարարների պարագան, որոնք մասնակցել են ապրիլի 2-ին Բաքվում կայացած ցույցերին: Մտահոգության հաջորդ պատճառը իրավապաշտպան Վիդադի Իսկենդերովի դատապարտումն է 3 տարվա ազատազրկման:**

**Ափսոսանք հայտնելով Ադրբեջանում ձերբակալված երիտասարդ բլոգերների եւ միջազգային իրավապաշտպանների հանդիպմանը խոչընդոտելու առումով՝ հայտարարությամբ նաեւ հիասթափություն է արտահայտվում իրավիճակի շարունակականության համար:**

**Իսկ Լեֆորի պարագայում ստացվում է, որ ԵՄ-Ադրբեջան համագործակցությունն անամպ իրողություն է:**

**Ա. Հ.**

## Օրագրի բիզնես, դրամահավաքություն

### *Ի՞նչ է կատարվում դպրոցներում*

«**Ազգ**» օրաթերթում սեպտեմբերի 6-ին «1000-դրամանոց օրագրի բիզնես դպրոցներում» հոդվածում համակարգչային սխալի պատճառով Սիամանթոյի անվան 162 դպրոցի փոխարեն տպագրվել էր Մոնթե Մելքոնյանի անվան թիվ 11 դպրոց, ինչի համար հայցում ենք ընթերցողների եւ թիվ 11 դպրոցի կոլեկտիվի ներողամտությունը: (Այս մասին «**Ազգի**» պաշտոնական հերքումը կարդալ ներքեւում):

Երեկ, մենք կրկին զրուցեցինք թիվ 162 դպրոցի աշակերտների այդ ծնողների հետ, ովքեր հաստատեցին, որ օրագրի վաճառք այդ դպրոցում կատարվել է: Ավելի ուշ զրուցեցինք նաեւ դպրոցի տնօրեն Աննա Ստեփանյանի հետ, որ չհերքեց, թե արդեն մի քանի տարի համագործակցում են կազմակերպության հետ, ով իրենց տրամադրում է օրագրեր Սիամանթոյի նկարով, նրա խոսքերով ու բանաստեղծություններով: Ստեփանյանն ասաց, որ նախաձեռնությունը ծնողական համայնքինն էր եւ մինչ իր տնօրեն նշանակվելն էր նման ավանդույթ դպրոցում գործում: «Ես չցանկացա այդ ավանդույթը խախտել: Ամեն տարի օգոստոսի վերջին ծնողական համայնքը հավաքում է այդ գումարները, որպեսզի արդեն սեպտեմբերին երեխաներին օրագրեր բաժանվեն: Այս տարի նույնպես օրագիր էինք պատվիրել: Երկու օր առաջ դպրոցում բաժանեցին հոբելյանական օրագրերը, մինչդեռ երեխաներն արդեն մեկ շաբաթ գալիս էին դպրոց եւ պատվիրած օրագրերում արդեն լրացումներ կատարել էին: Երբ ծնողներն ինձ մոտեցան եւ ասացին, ի՞նչ անենք նոր օրագրերը, ես էլ ասացի՝ հոբելյանական օրագիրը պահեք հաջորդ տարի կօգտագործեք», ասաց Ստեփանյանը՝ հավելելով, որ օրագիրն իրոք արժե 1000 դրամ: Աշխատանքային տետրերի վերաբերյալ տնօրենն ասաց, որ դրանք տացել են գրքերի հետ միասին: Ինչ վերաբերում է աշխատանքային տետրերը կամավորության սկզբունքով գնելուն՝ տնօրենն ասաց. «Թույլ տվեք այդ հարցին չպատասխանել»:

Սակայն «1000 դրամանոց օրագրի բիզնես դպրոցներում» հոդվածն առավել լայն արձագանք գտավ: Երեկ «**Ազգ**»-ի խմբագրություն զանգահարեցին Խաչիկ Դաշտենցի անվան թիվ 114 դպրոցի ծնողները՝ ասելով, որ սեպտեմբերի 1-ից դպրոցում դրամահավաքության արշավ է սկսվել: Ֆիզկուլտուրայի դահլիճը նորոգելու համար յուրաքանչյուր երեխայից 6.000 դրամ գումար են պահանջում, դպրոցի ֆոնդի համար հավաքում են 15.000 դրամ եւ այդպես շարունակ:

Երեկ զրուցեցինք դպրոցի տնօրեն Ռուզաննա Կոստանյանի հետ, որ տեղեկացրեց, որ դպրոցի պատին արդեն փակցրել են հայտարարություն, ըստ որի շինարարական աշխատանքներ իրականացնելու համար դպրոցն օգնության կարիք ունի եւ գումարը հավաքվում է խիստ կամավորության սկզբունքով: Թեպետ դպրոցի տնօրենը հավաստիացրեց, որ դա խիստ կամավորության սկզբունքով է, սակայն ծնողներն էլ մեզ հետ զրույցում հերքեցին՝ խնդրելով նախարարությանը լուրջ ուշադրություն դարձնել դպրոցում տիրող մթնոլորտին: Հ. Հ.

## Հերքում

Սեպտեմբերի 6-ին «**Ազգ**» օրաթերթում տպագրված «1000-դրամանոց օրագրի բիզնես դպրոցներում» հոդվածում տեղ է գտել սխալմունք: Թիվ 162 դպրոցի փոխարեն տպագրվել է թիվ 11 դպրոց, ինչի առնչությամբ հայցում ենք դպրոցի տնօրինության, կոլեկտիվի եւ ընթերցողների ներողամտությունը:

Կոչ ենք անում նաեւ այն բոլոր լրատվական կայքերին, ովքեր մեր թերթից վերցնելով տարածել են այս լուրը, նույնպես տարածել այս հերքումը:

*«Ազգ»*

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

## Անցուդարձ

# «Աղանդները թույն ու թարախ են շնչում Հայ առաքելական եկեղեցու հանդեպ»

1991-ին «Խղճի կրոնի եւ կրոնական կազմակերպությունների մասին» ընդունված օրենքն առաջավոր էր այն ժամանակվա համար: Սակայն ժամանակները փոխվեցին, այլ են միջազգային պարտավորությունները, ու օրենքի փոփոխության կարիք զգացվեց: Սա «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնի նախագահ **Ստեփան Դանիելյանի** տեսակետն է: Սեղանին դրված է օրենքի փոփոխության երեք նախագիծ, որոնք «աննախադեպ իրավիճակ են ստեղծել», քանի որ առաջին երկու նախագծերը Վենետիկի հանձնաժողովում սուր քննադատության են արժանացել: Թեպետ երրորդ նախագիծը Վենետիկի հանձնաժողովում որոշակի առաջընթաց է գրանցել, սակայն Դանիելյանը վստահ է՝ նախագիծը կրկին խնդիրներ կհարուցի՝ կապված հոգեորսության սահմանման կամ ձեւակերպման հետ, կրոնական կազմակերպությունների պարտադիր գրանցման դրանց գործունեության ազդեցության ձեւակերպումների հետ:

Օրենքում նշված է, որ հոգեորսության դեպքում, որպեսզի կրոնափոխ լինի, բացի ֆիզիկական ներգործությունից, կիրառվում է նաեւ հոգեբանական բռնություն, ինչը պատժելի է: Դանիելյանին անհասկանալի է, թե ինչ է նշանակում հոգեբանական ներգործություն ասվածը: «Ինչպե՞ս կարող ես ապացուցել, միգուցե գործում է, միգուցե չի գործում: Հաշվի առնելով մեր դատարանների որակը, շատ դժվար է մեծ հայեցողական մոտեցումների հնարավորություն տալ»:

«Հայելի» ակումբում հյուրընկալված **Միքայել եպիսկոպոս Աջապահյանն** ասաց, որ հոգեւորականների համար շատ հստակ է հոգեորսության բացատրությունը: «Նրանք, ովքեր բռնի հոգեբանական, նյութական, վարչական հիմքերի հիման վրա իրենց համոզմունքն ու կրոնն են տարածում, հոգեորսություն են իրականացնում: Եթե հայ առաքելական եկեղեցու հոգեւորականները գնան եզդիական համայնք եւ նրանց սոցիալական պայմաններից, մտավոր կարողություններից օգտվելով քարոզներ կարդան՝ հոգեորսություն է»:

Դանիելյանը չի ընկալում կրոնական կազմակերպությունների նկատմամբ թշնամանք տարածելու վերաբերյալ ձեւակերպումը: Նրա գնահատմամբ՝ հայ դասականներից շատերը՝ Րաֆֆին, Թումանյանը, թշնամական վերաբերմունք են ունեցել Հայ առաքելական եկեղեցու հանդեպ, եւ եթե օրենքն ընդունվի, ապա նրանց ստեղծագործությունները չպետք է դասավանդվեն: Սրբազանն ուղղեց, որ հայ դասականների վերաբերմունքը ոչ թե թշնամական էր, այլ քննադատական: Բացի այդ, աղանդավորական կազմակերպությունները, իրենք, որոշակի թշնամանք ունեն Հայ առաքելական եկեղեցու հանդեպ: «Նրանք թույն ու թարախ են շնչում Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ»: Դանիելյանի համոզմամբ՝ կրոնի վերահսկողությունն անձի կյանքի վրա պետք է թուլանա: Սրբազանը նրան կրկին ուղղեց: Ոչ թե կրոնի վերահսկողությունը, այլ կրոնական կազմակերպության. «Հայ առաքելական եկեղեցին դեմ է արհեստական վիժեցման գաղափարին, սակայն Հայ առաքելական եկեղեցու սպասավորները չեն մտնում ամեն մեկի ընտանիք ու պարտադրում իր տեսակետը»:

Դանիելյանին անհասկանալի է նաեւ կրոնական կազմակերպությունների գրանցման, վերահսկման վերաբերյալ օրենքի կետը: Նա դրական չի համարում, որ բոլոր կազմակերպությունները պետք է գրանցվեն: «Իսկ ինչո՞ւ չպետք է գրանցվեն: Հայ առաքելական եկեղեցին էլ է գրանցված, թեպետ 1700 տարի առանց գրանցման եղել է հայ ժողովրդի կողքին», հարցրեց սրբազանը, որին Դանիելյանը պատասխանեց լռությամբ:

Սրբազանը հավելում է, որ ազգային ու կրոնական միասնականությունն անհրաժեշտ է պետության կայացման համար: Նա հիշեցրեց Պետրոս Գետադարձ կաթողիկոսին, որ վաճառեց Անին, եւ ում ժողովուրդը անվանում է թշնամի: «Մի՞թե այսօր նույն բանը չի կատարվում: Այն ժամանակը Գետադարձը վաճառեց Անին Բյուզանդական կայսրությանը, որ իբր երկրի համար լավ լիներ, այն ժամանակ Գետադարձն էր ցանկանում ինտեգրվել Բյուզանդիային, հիմա էլ ցանկանում են ինտեգրվել Եվրոմիությանը, ինչ է թե՝ լավ ապագա է լինելու»:

Դանիելյանն էլ ասաց, որ չինտեգրվելու դեպքում Հայաստանին չեն տրամադրի վարկեր ու կասեն՝ «Ղարաբաղի հարցով մեր մոտ չլացեք, գնացեք ինքներդ լուծեք»:

Սրբազանն էլ հավելեց, որ Վրաստանը չի հարգում իր երկրի ազգային ու կրոնական փոքրամասնություններին, սակայն ստանում է գրանտներ: Հունաստանը միակ պետական կրոնն է հռչակել հույն ուղղափառ եկեղեցին, սակայն Եվրոմիության կազմում է:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ









# Զգոնության կոչ

Էլեկտրոնային մամուլում տեղ գտած «Քանաքեռի Սուրբ Աստվածածին եկեղեցին դարձել է «Կյանքի խոսք» աղանդի հավաքատեղի» նյութի առնչությամբ տեղեկացնում ենք հետեւյալը. սույն հարցը միշտ եղել է Արարատյան հայրապետական թեմի ուշադրության կենտրոնում: Տարիներ շարունակ համայնքի հոգեւոր կարիքները հոգացել է Ս. Հակոբ եկեղեցին: Սակայն ժամանակի մարտահրավերները պատեհ առիթ ստեղծեցին, որ Ս. Աստվածածինը կրկին դառնա գործող եկեղեցի: Առաջնորդական փոխանորդի կարգադրությամբ եկեղեցին վերանորոգումից հետո կունենա հոգեւոր հովիվ, եւ կհոգա համայնքի հոգեւոր պահանջները:

Ահազանգ ենք բարձրացնում, որ «Կյանքի խոսք» տոտալիտար աղանդը ծանր հետեւանքներ է բերում մարդկանց թե՛ հոգեւոր եւ թե՛ ֆիզիկական վիճակին: Արարատյան թեմը դիմել է նաեւ իրավապահ մարմիններին, որ պատժվեն իրավախախտները: Չգործող եկեղեցու բակում ակտիվություն ցուցաբերելով՝ «Կյանքի խոսք» տոտալիտար աղանդը մարդկանց միտումնավոր մոլորեցնում է՝ ներկայանալով իբրեւ առաքելական եկեղեցի:

Կոչ ենք անում չխաբվել եւ զգուշանալ, որ որեւէ մեկը չհայտնվի այդ կործանարար աղանդում: Զգոն եղեք: Ձեզ հուզող հարցերով մշտապես դիմեք հոգեւորականներին կամ գրեք Արարատյան հայրապետական թեմի **www.qahana.am** կայքին: Մենք հետեւողական ենք եւ արձագանքում ենք հուզող բոլոր հարցերին:

Արարատյան Հայրապետական թեմի մամլո դիվան

# Մարգար Օհանյանի դեմ ցուցմունքները շատանում են

Որ ճանապարհային ոստիկանության համակարգում ամեն ինչ հարթ չէ ու կոռուպցիոն դրսեւորումների հետ խաչվում է գրեթե ամեն ինչ, նորություն չէ հասարակության համար: Իսկ որ գնալով բոլոր հնարավոր ու անհնար մեղքերը ջրի երես են դուրս գալիս ու բարդվում ներկա դրությամբ արդեն իսկ աղմկոտ մեղադրանքով կալանավորված ՃՈ նախկին պետ Մարգար Օհանյանի ուղղությամբ, հաստատում է այն ցավոտ իրողությունը, որ մեր երկրում համակարգային մոտեցում չի լինում, միայն անձնական, այն էլ զուտ անձնական, այլապես ինչի՞ է սպասում Մարգար Օհանյանի աշխատանքը համակարգած ոստիկանապետը...

Ըստ Panorama.am-ի աղբյուրների, «Բենզինի գործի» նախաքննությունը շարունակվում է, եւ նոր բացահայտումներ են ի հայտ եկել: Մասնավորապես, ընդլայնվել են ճանապարհային ոստիկանության նախկին պետ Մարգար Օհանյանի կամ նրա իմացությամբ յուրացված գումարների ծավալները: Այժմ, ըստ կայքէջի աղբյուրի, նախաքննական մարմինը փորձում է պարզել՝ ինչպես են իրացվել կտրոնները:

Հիշեցնենք, որ այս գործի շրջանակներում ավելի վաղ կալանավորվել էր ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի նախկին հրամանատար Ստեփան Կարախանյանը, մեղադրանքով, որ Հայաստանի մարզերում ոստիկանության աշխատանքները կազմակերպելու համար իր ենթակայության տակ գտնվող առանձին վաշտերին հասանելիք եւ իրեն վստահված շուրջ 277.000 լիտր բենզինից ըստ նպատակի հատկացրել էր 121.000 լիտրը, իսկ տարբերությունը՝ յուրացրել: Կարախանյանի կալանավորմանը հետեւեցին ՃՈ նախկին պետ Մարգար Օհանյանի ձերբակալությունն ու կալանավորումը:

Ա. Հ.

# Հարուցվել է քրեական գործ՝ նորածնի մահվան դեպքով

**«Ազգ»-ն ընթերցողներին տեղեկացրել է Վայքի ծննդատանը սեպտեմբերի 3-ին տեղի ունեցած աննախադեպ ու անմարդկային վերաբերմունքի մասին, որի հետեւանքով նորածինն է մահացել: Վայքի ծննդատան բաժանմունքի վարիչ, մանկաբարձ-գինեկոլոգ Մետաքսյա Հովհաննիսյանը, Հիպոկրատի երդմանը հակառակ, գերադասել է տնային գործերը եւ նորածնի կյանքը թողել բախտի քմահաճույքին...**

**Գլխավոր դատախազությունում փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ, որից պարզաբանումներ ենք ներկայացնում:**

**Վայքի ծննդատանը մանկաբարձ-գինեկոլոգի կողմից մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու դեպքի կապակցությամբ գլխավոր դատախազի տեղակալի ցուցումով ոստիկանության Վայոց ձորի քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածով (Բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը):**

**Սեպտեմբերի 5-ի դրությամբ պարզվել է, որ Գնդեվազ գյուղի բնակչուհի Արմինե Թորոսյանը 2011թ. փետրվարի 2-ին որպես հղի հաշվառվել է «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքում: Ընդհանուր առմամբ հղիությունն ընթացել է նորմալ, խնդիրներ չեն հայտնաբերվել, զարգացումն ընթացել է նորմայի սահմաններում:**

**2011թ. հերթական կոնսուլտացիայի ժամանակ հղի Ա. Թորոսյանը «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ-ում անցել է սոնոգրաֆիկ հետազոտություն, որի ժամանակ պարզվել է, որ արձանագրված հղիության ժամկետը չի համապատասխանում հղիության օբյեկտիվ տվյալներին: Հղին ուղեգրվել է դոպլեր քննության՝ «Արմենիա» ԲԿ: Մի քանի օր անց Ա. Թորոսյանն իր կոնսուլտացիոն բժշկին հեռախոսով տեղյակ է պահել, որ դոպլեր հետազոտությամբ իր մոտ խնդիրներ չեն հայտնաբերվել, եւ այլեւս չի ներկայացել կոնսուլտացիաների:**

**2011թ. օգոստոսի 11-ին Ա. Թորոսյանը դիմել է «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունք: Այդ օրը, ինչպես նաեւ օգոստոսի 14-ին տնային հերթապահությունն իրականացրել է «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի վարիչ՝ Մետաքսյա Հովհաննիսյանը, որը օգոստոսի 11-ին զննելով ծննդկանին՝ պարզել է, որ ծննդաբերական ընթացք չկա, նշանակել է միջմկանային անալգին-դիմեդրոլ՝ ցավերը հանգստացնելու համար, եւ ուղարկել տուն:**

**2011թ. օգոստոսի 14-ին՝ ժամը 5-ի սահմաններում, Ա. Թորոսյանը կրկին դիմել է վերոհիշյալ բուժհաստատություն: Հերթապահ մանկաբարձուհին զննել է նրան, զանգահարել մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի վարիչին ու հայտնել, որ ծննդկանի վիճակը նորմալ է, եւ ներզննման տվյալներով արգանդի պարանոցի բացում չկա: Բաժանմունքի վարիչը հեռախոսազրույցի ընթացքում ցուցում է տվել կատարել մաքրող հոգնա, իսկ ինքը հիվանդանոց է գնացել 10:30-ին, անձամբ կատարել ներզննում եւ պարզել, որ արգանդի պարանոցի բացումը 2 սմ է, պտղապարկը՝ պահպանված, իսկ հեմոդինամիկ մյուս տվյալները՝ նորմալ: Պտղի սրտի աշխատանքը եղել է 147-148 զարկ 1 րոպեում, ինչը եւս նորմայի սահմաններում է եղել: Ծննդկանի հերթական զննումը կատարվել է 16:30-ին, զննման տվյալներով ծննդաբերության ընթացքը եղել է նորմալ: Հղիի մոտ ծիգային շրջանը սկսվել է ժամը 20-ին, արգանդի պարանոցի բացվածքը եղել է լրիվ:**

**Ժամը 21-ին նկատվել է ծիգային շրջանի թուլություն: Անմիջապես ձեռնարկվել է ծննդաբերության խթանում, պտղի սրտի աշխատանքը եղել է նորմալ, ներարգանդային թթվածնային քաղց չի ախտորոշվել: Ժամը 22:15-ի սահմաններում պտղի մոտ նկատվել է թթվածնային քաղց, իսկ գլուխը եղել է կոնքի ելքի ուղիղ չափսում, որի դեպքում ցուցված է եղել կատարել վակում-էքստրակցիա: Սակայն բուժմիավորումում տվյալ գործիքների բացակայության պատճառով կատարվել է էպիզիոտոմիա՝ շեքի կտրվածք, որից հետո մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի վարիչը պտղին պարանոցի հատվածից բռնելով՝ դուրս է բերել:**

**Երեխան ծնվել է կենդանի, բայց չի ճչացել: Երեխայի պարանոցին եղել է պորտալարի եռակի փաթաթում, պորտալարի վրա եղել է մեկ իսկական հանգույց: Բաժանմունքի վարիչը նորածնի պարանոցն ազատել է պորտալարից եւ թուլացրել հանգույցը: Երեխայի սրտի աշխատանքը եղել է նորմալ, սակայն երեխան լիարժեք չի շնչել: Այնուհետեւ բաժանմունքի վարիչը եւ մանկաբարձուհին կատարել են նորածնի վերին շնչուղիների արտածծում, արհեստական շնչառություն եւ վերակենդանացման այլ միջոցառումներ, որոնք օգուտ չեն տվել: Երեխան չի ճչացել շուրջ 40 րոպե:**

**Տեսնելով, որ երեխայի վիճակը ծանր է՝ համապատասխան կանչ է տրվել: 2 ժամ անց ժամանած շտապ օգնության անձնակազմը համապատասխան բուժօգնություն ցույց տալուց հետո երեխային տեղափոխել է Երեւան քաղաքի «Մուրացան» համալսարանական հիվանդանոց, որտեղ եւ 2011թ. սեպտեմբերի 4-ին երեխան մահացել է:**

**Դիահերձումից հետո լրացուցիչ կտեղեկացնենք քրեական գործի ընթացքի մասին:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Ես մեղադրում եմ

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

***Քսան տարի առաջ՝ 1991 թ. սեպտեմբերի 21-ին, Հայաստանի անկախության մակույկը համաշխարհային հեղաբեկումների ալիքների վրայով լողում էր դեպի անկախ պետականության բաղձալի ափը: Քսան տարիների ընթացքում անկախության ծովն աստիճանաբար ցամաքեց, արժանապատվության եւ հպարտության, ազատության եւ արդարության ձգտող հասարակությունը վերածվեց կծկված ու ցիրոթահար, վհատ ու թեւաթափ, հարմարվող ու կամազուրկ մարդկային զանգվածի, իսկ առաջընթացի եւ հզորության ձգտող նոր Հայաստանը դարձավ հետադեմ ու գավառամիտ, վախվորած ու անարի, արհամարհված ու ոտնահարված, անարգված ու դավաճանված երկիր՝ երկարատեւ դեգերումներից հետո խարխափ նետելով անորոշության եւ անհուսության ափին: Քսան տարի անց երբեմնի մեր երազների Հայաստանի Հանրապետության տեղում կոռումպացված, օրինազանց, հայաթափվող մի երկիր է առաջացել, որի՝ նման գոյությունը հերքում է անկախ պետականություն կայացնելու՝ հայ ժողովրդի ունակությունը: Երկիր, որի՝ նման գոյությունը սրախողխող է անում առաջադեմ ու ժողովրդավարական, ազատ ու արդար պետություն ունենալու, նրան պատվիրնելու եւ նրան օգտակար լինելու, նրանով հպարտանալու՝ ՀՀ քաղաքացու ձգտումը: Երկիր, որի՝ նման գոյությունը նման է անհույս ու դատապարտված այն սիրուն, որը տակնուվրա է անում մտքերդ, հույզերդ, ողջ էությունդ: Երկիր, որի՝ նման գոյությունը նման է ցանկացած պահի մահվան դատապարտող ընչազրկության: Քսան տարի առաջվա մեր ձգտումների եւ նպատակների ալացքը թրատվել-կասեցվել է:***

***Եվ այժմ՝ քսան տարի անց, ձեզ մեղադրում են նրանք, որոնց երիտասարդ արյունը թափվեց ազատ, անկախ, արժանապատիվ երկիր ունենալու համար:***

***Ձեզ մեղադրում են այն նորածինները, որոնք ծնվեցին անլույս եւ ցուրտ ծննդատներում, թեպետ աշխարհ գալու նրանց ճիչն ավելի ուժգին էր թվում, քան հայրենիքն անարգելու ձեր չմարող բնազդը:***

***Ձեզ մեղադրում են նրանք, որոնց զրկեցիք հայրենիքում ապրելու եւ այնտեղ հանգչելու երանությունից: Նրանց բոլորի մեղադրանքը արձձե ծանրություն ունի, եւ ձեր շարքերն այժմ կքել են այդ բեռան տակ:***

***Ես մեղադրում եմ ձեզ նրանց բոլորի անունից: Ես մեղադրում եմ ձեզ Հայաստանի Հանրապետության անունից: Ես մեղադրում եմ ձեզ հանուն Հայաստանի Հանրապետության:***

Ես մեղադրում եմ Խորհրդային Հայաստանի նոմենկլատուրային, որը վարժեցրեց Հայաստանի ժողովրդին կոռումպացված, անարդար եւ անօրեն երկրում ապրելուն՝ ճզմելով այդ ժողովրդի մեջ օրինականության ու արդարության պատվիրնելու ձգտումը:

Ես մեղադրում եմ Խորհրդային Հայաստանի վերջին տարիների հարափոփոխ ղեկավարությանը, որն անընդունակ եղավ վերակառուցման քաղաքական տաք քամիների առջեւ բացել Հայաստան երկրի հնամաշ ու փոշեպատ պատուհանները:

Ես մեղադրում եմ նրանց ազգային խնդիրներին հետամուտ լինելու անվճռականության մեջ:

Ես մեղադրում եմ Խորհրդային Հայաստանի կոմունիստական նոմենկլատուրային, որոնց մի մասը հաջողությամբ սողոսկեց ժողովրդավարացող Հայաստանի երիտասարդ մարմնի մեջ՝ ատելով, արհամարհելով եւ ոտնատակ տալով նոր արժեքները:

Ես մեղադրում եմ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին, որոնք ուխտադրուժ եղան՝ ոտնատակ տալով ազատ, անկախ, արժանապատիվ, արդար, ժողովրդավարական պետություն կայացնելու իրենց իսկ սերմանած ծիլերը:

Ես մեղադրում եմ Հայոց Համազգային Շարժմանը, որը, սկզբնապես լինելով նոր հասարակարգի, նոր արժեհամակարգի, անկախ պետականության ջահակիրը՝ վարկաբեկեց-անվանարկեց-ոտնահարեց այդ արժեքները:

Ես մեղադրում եմ Հայոց Համազգային Շարժմանը, որը դարձավ ընտրախախտումների, ընտրակեղծիքների, բռնությունների սկզբնավորողը Հայաստանում՝ ավերելով սեփական իշխանությունն ընտրելու, նրան պատվիրնելու եւ վստահելու՝ հասարակության ձգտումները:

Ես մեղադրում եմ հայ ավանդական կուսակցություններին, որոնք նեղ կուսակցական խնդիրները պետականությունից ավելի բարձր դասեցին:

Ես մեղադրում եմ հայ ավանդական կուսակցություններին, որոնք փառազրկվեցին Հայաստանում, կամ ազգային շահի եւ խնդիրների նեղմիտ եւ պարզունակ ընկալման, կամ ներկուսակցական աղտեղությունների, կամ խոսքի եւ գործի ահռելի հակադրության հետեւանքով:

Ես մեղադրում եմ Հայ Յեղափոխական Դաշնակցությանը, որը սփյուռքի միջկուսակցական պայքարի գործելակերպը, հոգեբանությունն ու բառապաշարը արմատավորեց Հայաստանում:

Ես մեղադրում եմ Հայաստանի Ռամկավար-ազատական եւ Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություններին, որոնք իրենց անփառունակ գործելակերպով անվանարկեցին մի դեպքում՝ ազատական, մյուս դեպքում՝ սոցիալ-դեմոկրատական գաղափարները:

Ես մեղադրում եմ Ազգային-ժողովրդավարական միությանը, որը ցույց տվեց, թե Հայաստանում ինչպես են վաճառքի հանվում քաղաքական սկզբունքներն ու համոզմունքները:

Ես մեղադրում եմ «Օրինաց երկիր» կուսակցությանը, որը ցույց տվեց, թե ինչպես է Հայաստանում կուսակցություն հիմնադրվում քաղաքական սկզբունքների եւ համոզմունքների բացակայության պայմաններում:

Ես մեղադրում եմ «Հանրապետական» կուսակցությանը, որը դարձավ քաղաքական դեմագոգիայի եւ պաշտոնապաշտության առաջամարտիկը:

Ես մեղադրում եմ «Հանրապետական» կուսակցությանը, որի երբեմնի խորհրդային այլախոհները դարձան գործող արատավոր քաղաքական համակարգի ջերմեռանդ պաշտպանները:

Ես մեղադրում եմ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը, որը ցույց տվեց, թե ինչպես է Հայաստանում բիզնեսը գնում քաղաքականությունը եւ անհատներին:

Ես մեղադրում եմ հայաստանյան մնացյալ բոլոր կուսակցություններին, որոնք նորագույն հայ քաղաքական միտքը խեղդեցին օրորոցում: Ես մեղադրում եմ նրանց քաղաքական կարճատեսության մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ բոլոր 5 խորհրդարանների պատգամավորներին Հայաստանի Հանրապետության քաղաքական ներկայի եւ ապագայի հանդեպ դրսեւորվող անտարբերության մեջ: Ես մեղադրում եմ նրանց պառլամենտարիզմի չկայացման, օրենսդիր իշխանության ներկայացուցչականության կորստի մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ վարչապետներին, որոնց գործունեության արդյունքում արժեզրկվեցին ու վարկաբեկվեցին ազատական տնտեսական համակարգը եւ ազատ շուկայական հարաբերությունները:

Ես մեղադրում եմ ՀՀ վարչապետներին հայրենական արտադրությունն արհամարհելու, ռազմավարական արտադրական ճյուղեր չզարգացնելու, Հայաստանի տնտեսությունը ծառայություններից, տրանսֆերտներից, օտարերկրյա ներարկումներից կախման մեջ դնելու մեջ: Ես մեղադրում եմ նրանց արտաքին պարտքի ծավալների ահռելի աճի մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ վարչապետներին տնտեսական հովանավորչությունն ու մենաշնորհներն արմատավորելու, անազատ եւ անմրցունակ տնտեսություն ձեւավորելու մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ վարչապետներին սեփական աշխատանքին պատվիրնած պարկեշտ մարդկանց համար բարեկեցիկ կյանք ապահովելու, անհոգ մանկություն եւ հանգիստ ծերություն ապահովելու անկարողության մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ վարչապետներին հասարակության սոցիալական բեւեռացման խորացման եւ սոցիալական շահատակության մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ պաշտպանության նախարարներին հայկական բանակի արժանապատվության նսեմացման, զինվորների ծանակման ու սպանությունների, հայկական բանակում ծառայելու՝ հայ մարդու խորացող տագնապի մեջ:

Ես մեղադրում եմ նրանց հայկական բանակում տիրող կոռուպցիայի եւ կաշառակերության մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ պաշտպանության նախարարներին հայկական բանակը քաղաքականության բութ գործիք դարձնելու, հայկական զինուժը ՀՀ քաղաքացիների դեմ օգտագործելու մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ արտաքին գործերի նախարարներին երկյուղած, անարժանապատիվ, չհաշվարկված արտաքին քաղաքականություն իրականացնելու համար:

Ես մեղադրում եմ ՀՀ արտաքին գործերի նախարարներին օտարերկրյա կողմնորոշումների քաղաքականություն իրականացնելու, ՀՀ արտաքին քաղաքականությունն ինքնուրույնությունից զրկելու մեջ:

Ես մեղադրում եմ նրանց մեր պետության սահմանների պաշտպանությունն օտար պետությանը հանձնելու մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ կրթության նախարարներին Հայաստանում հանրակրթության փլուզման եւ բուհական կրթության արժեզրկման մեջ: Ես մեղադրում եմ նրանց կրթության, ուսման, գիտելիքի հասարակական արժեքի կորստի մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ կրթության նախարարներին կրթությունը բիզնեսի վերածելու մերժելի ուղեգիծ իրականացնելու մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ կրթության նախարարներին կոռուպցիան, կաշառակերությունը կրթական համակարգի հավերժական ուղեկիցներ դարձնելու մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ իրավապահ մարմիններին բացառապես պատժիչ գործառույթներ իրականացնելու, օրինազանցության եւ կաշառակերության մեջ:

Ես մեղադրում եմ դատական մարմիններին արդարադատության հանդեպ հասարակական վստահության իսպառ բացակայության, կաշառակերության, կոռուպցիայի, կախյալ դատական համակարգ ձեւավորելու մեջ:

Ես մեղադրում եմ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանին սահմանադրական արդարադատության հսկա կաղնին հողմածեծ անելու եւ այն տաշեղի վերածելու համար:

Ես մեղադրում եմ Երեւանի քաղաքապետներին Հայաստանի 13-րդ մայրաքաղաքի անցյալը ջնջելու, երբեմնի վարդագույն քաղաքը բետոնե գորշ զանգվածի վերածելու համար:

Ես մեղադրում եմ Երեւանի քաղաքապետներին Երեւանը երեւանցիների համար աստիճանաբար դժոխքի վերածելու համար՝ ռեստորանային չդադարող աղմուկի, հրավառությունների, ավտոմեքենաների շչակների, կանաչ տարածքների ահռելի կորստի համար:

Ես մեղադրում եմ Երեւանի գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանին մայրաքաղաքն անգթաբար դիմազրկելու, այն մեգապոլիսի վերածելու գավառական ձգտման, Երեւանը որպես անհոգի բիզնես-ծրագիր դիտարկելու, մայրաքաղաքն իր տարակուսելի ճաշակին համապատասխան վերաձեւելու մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին Հայաստանում ավտորիտար կառավարման համակարգ ներդնելու, Հայաստանը ժողովրդավարության ճավղից դուրս մղելու եւ արատավոր շրջան հրելու, ժողովրդավարության երբեմնի կղզյակը ռմբահարելու մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին պաշտոնի կադրային քաղաքականություն իրականացնելու մեջ:

Ես մեղադրում եմ Լեւոն Տեր-Պետրոսյանին, որի կառավարման բարդ ժամանակահատվածում ազատագրվեց Ղարաբաղը, սակայն ինքը դարձավ պարտվողական տրամադրությունների դրոշակակիրը՝ շփոթ առաջացնելով հայկական կողմի բացառիկ հաղթանակի հանդեպ:

Ես մեղադրում եմ Լեւոն Տեր-Պետրոսյանին քաղաքական պաստհապաշտության մեջ: Ես մեղադրում եմ նրան 2008 թ. մարտի 1-ին դրսեւորած անվճռականության, անհետեւողականության, եսակենտրոնության մեջ:

Ես մեղադրում եմ Լեւոն Տեր-Պետրոսյանին հայկական հեղափոխությունը երիցս ձախողելու մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին պատերազմի անագորույն կանոնները քաղաքացիական կյանքում կիրառելու մեջ:

Ես մեղադրում եմ Ռոբերտ Քոչարյանին կոռուպցիան, կաշառակերությունը պետական համակարգում արմատավորելու մեջ:

Ես մեղադրում եմ Ռոբերտ Քոչարյանին ազատ ընտրական համակարգի գլխատման մեջ:

Ես մեղադրում եմ նրան 2008 թ. մարտի 1-ի արյունալի շրջադարձի մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանին 2008 թ. մարտի 1-ի արյունալի իրադարձություններից հետո առանց վարանելու նախագահի պաշտոնը ստանձնելու մեջ:

Ես մեղադրում եմ Սերժ Սարգսյանին մարտի 1-ի նախադրյալները հաղթահարելու վճռականության եւ կամքի բացակայության մեջ:

Ես մեղադրում եմ նրան Հայաստանի ժողովրդագրական աղետը չկանխելու մեջ:

Ես մեղադրում եմ Սերժ Սարգսյանին Հայաստանի անկախության ինքնալուծարման գործընթացն անվրդով ավարտին հասցնելու մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ երեք նախագահներին Հայաստանը մեծ նպատակներից եւ ապագայից զրկելու մեջ:

Ես մեղադրում եմ Վազգեն Մանուկյանին «համաշխարհային ազգի» եւ «սովորական ազգի» տեսական բանավեճում գործնականում պարտվելու եւ այդ պարտությանը անձնապես եւ մեծապես նպաստելու համար:

Ես մեղադրում եմ Բաբկեն Արարքցյանին երկրի համար ճակատագրական պահերին ուխտադրուժ լռություն պահպանելու համար:

Ես մեղադրում եմ Ղարաբաղի իշխանություններին Հայաստանի հետ վերամիավորվելու գաղափարից հրաժարվելու մեջ:

Ես մեղադրում եմ Ղարաբաղի իշխանություններին ղարաբաղյան զինուժը Հայաստանի ներքաղաքական զարգացումներում օգտագործելու մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ-ում հավատարմագրված դեսպաններին եւ միջազգային կազմակերպություններին Հայաստանի հանդեպ դրսեւորվող անտարբերության եւ արհամարհանքի համար:

Ես մեղադրում եմ հայկական Սփյուռքին Հայաստանի հանդեպ իրենց հայրեցողական կեցվածքի համար: Ես մեղադրում եմ հայկական Սփյուռքին Հայաստանի ժողովրդավարացման գլխատման հանդեպ դրսեւորվող անհաղորդ կեցվածքի մեջ:

Ես մեղադրում եմ հայկական Սփյուռքին Հայաստանի Հանրապետությունը համաշխարհային զարգացումներին մասնակից դարձնելու ջանքերի բացակայության համար:

Ես մեղադրում եմ Հայ Առաքելական եկեղեցուն քրիստոնեական սկզբունքներն ու արժեքներն անտեսելու եւ դրանց կենսունակության հանդեպ հասարակության հավատը խարխլելու մեջ:

Ես մեղադրում եմ աղանդավորական կազմակերպություններին հայ քրիստոնյաների հոգեորսության, Հայ Առաքելական եկեղեցու հիմքերը խարխլելու փորձերի մեջ:

Ես մեղադրում եմ աղանդավորական կազմակերպություններին հավատացյալների կրոնական զգացմունքներն ուղղորդելու, հասարակության հոգեւոր հիմքերը կազմաքանդելու մեջ:

ԱՄԲԻՈՆ

Ես մեղադրում եմ քաղաքացիական կառույցներին քաղաքացիական հասարակության կայացմանը խոչընդոտելու մեջ:

Ես մեղադրում եմ ՀՀ քաղաքացիներին, որ թույլ տվեցին, որ ոտնատակ տան հայրենիքում արժանապատիվ ապրելու իրենց իրավունքը:

Ես մեղադրում եմ ՀՀ քաղաքացիներին, որ փախչեցին ու հուսալքվեցին՝ անզոր համարելով իրենց փրկել հայրենիքը անարգումից:

Ես մեղադրում եմ հայաստանյան տպագիր մամուլին առաջընթացի եւ զարգացման մեջ հասարակությունից առաջ չանցնելու, լրջության կորստի, մասնագիտական արժեքների նահանջի մեջ:

Ես մեղադրում եմ հայաստանյան հեռուստաընկերություններին մասնագիտական անազնվության հետ հաշտվելու, զանգվածային լսարանի մոտ ցածրակարգ ճաշակ ու բնազդ ձեւավորելու մեջ:

Ես մեղադրում եմ մշակույթի գործիչներին հայկական մշակույթն ամլացնելու մեջ:

Ես մեղադրում եմ հայ գործարարներին, որոնք չհաղթահարեցին սեփական գավառամտությունը, նեղմտությունը, շահամոլությունը, հայրենիքի եւ ժողովրդի հանդեպ իրենց խոր արհամարհանքը:

Ես մեղադրում եմ հայ գործարարներին, որոնք դարձան ոչ թե հասարակության եւ պետության առաջընթացի եւ բարեկեցության ապահովման սյուները, այլ արատավոր տնտեսական եւ քաղաքական համակարգի սյուները:

Ես մեղադրում եմ հայ կանանց, որ թույլ տվեցին, որ հայ տղամարդիկ պատմության մեջ երրորդ անգամ ձախողեն հայկական պետականությունը:

Ես մեղադրում եմ հայ տղամարդկանց Հայաստանի դավաճանության մեջ:

Ես մեղադրում եմ հայ ուսուցիչներին, որոնք հայ դպրոցականին չսովորեցրին, որ այս կերպարները չեն մեր ժամանակների հերոսները:

Ես մեղադրում եմ հայ ուսուցիչներին, որ հայ դպրոցականին չսովորեցրին, որ հայ ժողովրդի փրկությունը գանգից եկել է ոչ նրա հավաքական կամքի դրսեւորման, այլ նրա փոքրաթիվ անհատների՝ հայրենիքի հանդեպ խելահեղ սիրո եւ նվիրման արդյունքում:

Ես մեղադրում եմ հայ դասախոսներին, որոնք հայ ուսանողներին չսովորեցրին ամենակարեւոր դասը՝ ազատ երկրի ազատ քաղաքացի լինելու դասը:

Ես մեղադրում եմ ինձ, որ այս ամենից հետո շարունակում եմ հավատալ, որ Հայաստանն իմ երկիրն է, ոչ թե նրանցը՝ ձերը:

Ես մեղադրում եմ ինձ, որ այս ամենից հետո արյանս հոսքը եւ սրտիս զարկերն արագանում են, երբ մտածում եմ Հայաստանի մասին:

Ես մեղադրում եմ ինձ, որ շարունակում եմ զգալ Հայաստան երկրի սրտի զարկերն այնպես պարզ ու հստակ, ինչպես մայրն է զգում դեռեւս աշխարհ չեկած իր զավակի սրտի բաբախյունը:

Ես մեղադրում եմ ինձ, որ չեմ կարողացել փրկել իմ հայրենիքը ձեզնից:

Ես մեղադրում եմ ձեզ՝ բոլորիդ, Հայաստանի Հանրապետության անունից: Ես մեղադրում եմ ձեզ հանուն Հայաստանի Հանրապետության:

ԱԶԳ

# Միջազգային

# Լիբիական 200-250 զինվորական մեքենա անցել է Նիգեր

## *Բանի-Վալիդն ապստամբների շեղքին է*

Լիբիացի ապստամբներին եւ Բանի-Վալիդ քաղաքի պաշտպաններին հաջողվել է համաձայնության գալ պաշարված քաղաքի խաղաղ հանձնման շուրջը: «Ալ Ջազիրա» հեռուստաալիքը հաղորդում է, որ սեպտեմբերի 6-ին ապստամբներն առանց մարտի մտել են Բանի-Վալիդ: Ավելի վաղ Անցումային ազգային խորհուրդը (ԱԱԽ) Մուամմար Քադդաֆիի կողմնակիցներին ենթակա այդ քաղաքին մեկշաբաթյա վերջնագիր էր ներկայացրել անձնատուր լինելու եւ հեղափոխական շարժմանը միանալու համար: Հակառակ դեպքում գրոհն անխուսափելի կլիներ:



Ինչ վերաբերում է Լիբիայի մյուս իրադարձություններին, 200-250 զինվորական մեքենաներից կազմված լիբիական զրահատեխնիկայի մի շարասյուն մուտք է գործել Ագադես քաղաք (Նիգերի հյուսիս): Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը, վկայակոչելով Ֆրանսիայի պաշտպանական գերատեսչության աղբյուրներ:

Վերջիններիս տվյալների համաձայն, շարասյան մեջ լիբիական բանակի հարավային գումարտակների այն զինծառայողներն են, որոնք հավատարիմ են մնում Մուամմար Քադդաֆիին: Շարասյան երթուղին հավանաբար անցել է Ալժիրի տարածքով:

Ֆրանսիացի զինվորականների տվյալներով, Քադդաֆին եւ նրա որդիներից Սեյֆ ալ Իսլամը քննության էին առել տվյալ շարասյանը միանալու հնարավորությունը: Ենթադրվում է, որ շարասյան երթուղու վերջնակետը Բուրկինա Ֆասոն է, որն ապաստան էր առաջարկել Քադդաֆիին եւ նրա ընտանիքի անդամներին: Սակայն ֆրանսիացի զինվորականները ստույգ չգիտեն Քադդաֆիի եւ նրա որդու գտնվելու վայրը:

Քադդաֆիի պաշտոնական ներկայացուցիչ Մուսա Իբրահիմը երեկ գիշեր սիրիական հեռուստաալիքներից մեկի եթերում հայտարարել է, որ Լիբիական հեղափոխության առաջնորդը Լիբիայում է: Ֆրանսպրեսը մեջբերում է Իբրահիմի այն խոսքերը, թե «Քադդաֆին իրեն հիանալի է զգում եւ զբաղվում է Լիբիայի պաշտպանության կազմակերպմամբ», եւ թե նրա որդիները եւս երկրում են եւ «պատրաստ են իրենց զոհաբերել հանուն հայրենիքի»:

Օգոստոսի լույս 20-ի գիշերը սկսվեց Տրիպոլիի գրոհը: Դրանից հետո մի քանի օր Քադդաֆիի կողմնակիցները պնդում էին, թե նա մնում է մայրաքաղաքում: Ավելի ուշ հայտնվեցին տեղեկություններ, թե նա մեկնել է Բանի-Վալիդ կամ Սիրտ:

# Իսլանդիայում դատում են երկիրը սնանկացրած նախկին վարչապետին

Իսլանդիայի նախկին վարչապետ Գեյր Խորդեն երեկ ներկայացել է դատարան: Նա պատասխանատու է համարվում երկիրը ճարակած տնտեսական ճգնաժամի եւ բանկային համակարգի փլուզման համար, նշում է Ֆրանսպրես գործակալությունը:



Խորհրդարանի նախաձեռնությամբ ստեղծված հատուկ հանձնաժողովի տվյալներով, 2008-ի գարնանը Խորդեն տեղեկացված է եղել առաջիկա ֆինանսական ճգնաժամի մասին, բայց չէր հայտնել կառավարությանը եւ համապատասխան գերատեսչությունների ղեկավարներին:

60-ամյա Խորդեն իսլանդացի բարձրաստիճան առաջին քաղաքական գործիչն է, որին դատում են ֆինանսական ճգնաժամի համար: Մեղավոր ճանաչվելու դեպքում նախկին վարչապետը կարող է ազատազրկվել երկու տարով:

Խորդեի կառավարման տարիներին Իսլանդիայի տնտեսությունը խոր ճգնաժամի մեջ հայտնվեց երկրի բանկային համակարգի փլուզումից հետո: 2008-ի հոկտեմբերին Իսլանդիայի կառավարությունն իր վերահսկողության տակ առավ երկրի բոլոր 6 բանկերը, փորձելով կանխել տնտեսական անկումը, բայց այդ միջոցը չօգնեց եւ միայն խորացրեց տիրող խուճապային տրամադրությունները:

Տնտեսական իրավիճակը շարունակում էր վատթարանալ, եւ 2009-ի հունվարին Խորդեն գրեց կառավարությունը, որը չէր հաղթահարել ընդհանուր տնտեսական ճգնաժամի հետեւանքները:

# Իրանը ՄԱԳԱՏԷ-ի հետ կգործակցեր պատժամիջոցների վերացման դիմաց

Իրանը պատրաստ է ՄԱԳԱՏԷ-ի տեսուչների ազատ մուտք ապահովել իր միջուկային օբյեկտներ՝ միջազգային պատժամիջոցների վերացման դիմաց: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ այդ մասին հայտարարել է Իրանի ատոմային էներգետիկայի կազմակերպության ղեկավար Ֆերեյդուն Աբբասին:

Նա չի պարզաբանել, թե իրանական կողմը ՄԱԳԱՏԷ-ի որ միջոցառումներն է համարում ընդունելի: Աբբասին ավելացրել է, որ Իրանի ատոմային ճյուղն ավելի ու ավելի հաճախ է արտերկրից կիբեռգրոհների եւ անորակ սարքավորանքի մատակարարման օբյեկտ դառնում:

Մի շարք երկրների իշխանություններ եւ որոշ միջազգային կազմակերպություններ մտահոգված են Իրանի միջուկային ծրագրից, կասկածելով, թե այդ երկիրն ատոմային զենք է մշակում: Սակայն Թեհրանը խոսում է իր միջուկային ծրագրի խաղաղ բնույթի մասին եւ շարունակում է ուրանի հարստացման աշխատանքները:

ՄԱԳԱՏԷ-ի տեսուչների հետ համագործակցությունն անցյալում մերժած Իրանի դեմ ՄԱԿ-ը ձեռնարկել է տնտեսական պատժամիջոցներ: Դրանք Իրանի մի շարք քաղաքացիներին եւ ընկերություններին արգելում են տնտեսական հարաբերություններ ունենալ արտերկրում եւ սահմանափակում են սպառազինության մատակարարումներն Իրանին:

Պ. Ք.

# Դեւիդ Պետրեուսը ստանձնեց ԿՀՎ ղեկավարի պաշտոնը

Սեպտեմբերի 6-ին Կենտրոնական հետախուզական վարչության տնօրենի պարտականությունները ստանձնել է պաշտոնաթող գեներալ Դեւիդ Պետրեուսը, որը դեռ վերջերս Աֆղանստանում ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի զորքերի հրամանատարն էր:

Օգոստոսի 31-ին 58-ամյա Պետրեուսը թողել էր պաշտոնը, ավարտելով մոտ 40 տարվա զինվորական կարիերան, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը: Պենտագոնում անցկացված արարողության ժամանակ ԱՄՆ պաշտպանության փոխնախարար Ուիլյամ Լինը նրան բնութագրել էր որպես վերջին տասնամյակի «առաջատար ռազմագետներից մեկը»:



Ավելի վաղ նախագահ Բարաք Օբաման գեներալ Պետրեուսին ԿՀՎ նոր ղեկավար նշանակելու որոշումը հրապարակելիս ասել էր, որ նա «գրեթե 40 տարվա ծառայության ընթացքում գործ է ունեցել հետախուզական տեղեկատվության հետ եւ քաջատեղյակ է, որ այն պետք է լինի ժամանակին եւ ստույգ»:

Դրա հետ մեկտեղ փորձագետները նշում են, որ ԿՀՎ նոր ղեկավարին վիճակված է բախվել որոշակի դժվարությունների. «Վաշինգտոն փոստ» թերթի մեկնաբան Դեւիդ Իգնատիուսը մանրամասնում է, որ խոսքը ԿՀՎ վերլուծաբանների աշխատանքի մասին է, որոնք վերջերս բավական ցածր գնահատական տվեցին Աֆղանստանում իրականացվող ռազմական գործողությանը: Նրանք մասնավորապես կարծիք հայտնեցին, որ այդ երկրում պատերազմը «մտնում է փակուղի», մինչդեռ Պետրեուսը հակառակ կարծիքին է:

Ամեն դեպքում ԱՄՆ գլխավոր հետախուզական ծառայությունը նոր ղեկավար ունի երկամսյա ընդմիջումից հետո. ԿՀՎ նախկին տնօրեն Լեոն Պանետտան հուլիսի 1-ից գլխավորում է երկրի պաշտպանության նախարարությունը:

# Ձերբակալվել է «Ալ Ղաիդայի» «արտգործնախարարը»

Պակիստանում ձերբակալվել է «Ալ Ղաիդա» միջազգային ահաբեկչական ցանցի «արտգործնախարար» Յունիս ալ Մավրիտանին: RFI ռադիոկայանը հաղորդում է, որ նա պատասխանատու էր գրոհայինների միջազգային կապերի համար. մասնակցում էր ԱՄՆ-ում, Եվրոպայում եւ Ավստրալիայում ահաբեկչությունների նախապատրաստմանը: Ֆրանսպրեսի տվյալներով, ալ Մավրիտանին ծրագրել էր դիվերսիաներ կազմակերպել ամերիկյան նավթամուղների վրա եւ հիդրոէլեկտրակայաններում:

Յունիս ալ Մավրիտանին թաքնվում էր Բելուջիստանի նահանգում: Նրա հետ մեկտեղ ձերբակալվել են «Ալ Ղաիդայի» երկու ուրիշ բարձրաստիճան ներկայացուցիչներ: Պակիստանի հետախուզությունը գործողություններ իրականացրել է ամերիկյան հատուկ ծառայությունների հետ համատեղ:

Ալ Մավրիտանիի ձերբակալությունն այս տարի երկրորդ ծանր հարվածն է «Ալ Ղաիդային»: Առաջինը Ուսամա բեն Լադենի սպանությունն էր մայիսի լույս 2-ի գիշերը: Ամերիկյան հատուկ ջոկատներն այդ գործողությունն իրականացրել էին առանց պակիստանցիների մասնակցության, հարուցելով նրանց զայրույթը: Բայց Պակիստանին անհրաժեշտ է ԱՄՆ-ի ֆինանսական օգնությունը, իսկ ամերիկացիներն իրենց հերթին չեն կարող «Ալ Ղաիդայի» դեմ պայքարել առանց Պակիստանի բանակի աջակցության: Այնպես որ փոխադարձ վիրավորանքները մոռացվում են ընդհանուր շահերի առկայության դեմքում:

ՆԱԵՎ ԵՐԳՉԱԽՄԲԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ

# Երիտասարդական երգչախմբերի հանրապետական փառատոն-մրցույթ՝ նվիրված Հայաստանի անկախության 20-ամյակին



«**Ազգը**» ընթերցողներին տեղեկացրել է Համաշխարհային հայկական կոնգրեսի (ՀՀԿ) եւ Ռուսաստանի հայերի միության (ՌՀՄ) կողմից մեր երկրի անկախության 20-ամյա հոբելյանին նվիրված գրականության, կերպարվեստի, ժուռնալիստների, գիտնականների եւ նաեւ մի շարք այլ բնագավառներում անցկացվող մրցույթների մասին: Դրանց շարքը ավելացել է եւս մեկով՝ երիտասարդ երգչախմբերի հանրապետական փառատոն-մրցույթով: ՀՀ մշակույթի նախարարության, Հայաստանի երաժշտական ընկերության հետ համատեղ, սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 10-ը Երեւանում «Մրցանակաբաշխություն-2011թ.»-ի շրջանակներում ՌՀՄ-ի նախաձեռնած փառատոն-մրցույթը առաջին անգամն է անցկացվելու: Երեկ մշակույթի փոխնախարար **Արթուր Պողոսյանը**, ՌՀՄ-ի եւ ՀՀԿ-ի փոխնախագահ **Վլադիմիր Աղայանը** եւ Հայաստանի երգչախմբային ընկերության նախագահ, պրոֆեսոր **Դավիթ Ղազարյանը** հանդիպեցին լրագրողների հետ ու ներկայացրին փառատոնի անցկացման կարգը: «Մրցանակաբաշխություն-2011»-ին կարող են մասնակցել պրոֆեսիոնալ եւ սիրողական այն երգչախմբերը, որոնց անդամների միջին տարիքը չի գերազանցում 35-ը: Փառատոնի պարտադիր պայմաններից է՝ Կոմիտասի եւ ուրիշ հայ կոմպոզիտորների խմբերգերից մեկ ստեղծագործության կատարումը: Մայրաքաղաքում գործող երգչախմբերի համար փառատոն-մրցույթի ունկնդրումը մասնագիտական ժյուրիի կողմից, կկայանա Երեւանում, իսկ մարզերի համար՝ համապատասխան մարզկենտրոններում: Մրցույթի համար սահմանված են երեք մրցանակ՝ 600.000-ական դրամ, խրախուսական երեք մրցանակ, պատվոգիր եւ դրամական պարգեւ՝ 200.000-ական դրամ:

Արթուր Պողոսյանը բարձր գնահատեց ՌՀՄ եւ նախարարության համագործակցությունը, որը մեծ խթան է մեր երկրի կատարողական արվեստի զարգացման համար: «Փառատոն-մրցույթում տարիքային սահմանափակումը եւ հանրապետության ողջ տարածքում անցկացվող փառատոնը համահունչ է կառավարության քաղաքականությանը, մշակույթի նախարարության կողմից իրականացվող՝ մշակույթի համաչափ զարգացման թեզի ներքո», ասաց պրն Պողոսյանը:

Վլադիմիր Աղայանն ասաց. «Կազմակերպության ստեղծման առաջին իսկ օրվանից համագործակցել ենք նախարարության հետ ու մշտապես մեր ուշադրության կենտրոնում ենք պահել Հայաստանի Հանրապետության մտավոր կյանքի աշխուժացմանը, ու աջակցել ենք ամենամյա մրցույթ-փառատոների կազմակերպմանը: Իսկ մտավոր աշխուժացման կենտրոնական դեմքը դրանք մտավորականներն են՝ գրող, նկարիչ, երաժիշտ, ժուռնալիստ: Առաջին հերթին անհրաժեշտ է բարձրացնել նրանց աշխատանքի արդյունավետությունը: Դժբախտաբար, ինչպես գիտեք, հատկապես վերջին 20 տարվա ընթացքում գիտական եւ ստեղծագործական մտավորականությունը հայտնվել է հասարակության կարիքավորների շարքում եւ պետությունը անհրաժեշտ միջոցներ չունի օժանդակելու ստեղծագործական միություններին: Մենք փորձեցինք այդ բացը ինչ-որ չափով լրացնել, որի պարզ վկայությունն են 2007-ից սկսված մրցանակաբաշխությունները»: Նախկին մրցանակաբաշխություններին միացավ եւս մեկը՝ «Երիտասարդական երգչախմբերի հանրապետական փառատոն-մրցույթը», որով ինչպես նշեց պրն Աղայանը, «մենք հայացքով թեքվել ենք դեպի կատարողական արվեստը, որը մշակույթի նախարարության խնդրանքն էր»:

Դավիթ Ղազարյանն իր հերթին նշեց, որ նման փառատոնը լայն հնարավորություններ է ստեղծում Հայաստանում երգչախմբային արվեստի զարգացման եւ նաեւ դպրոցներում երգչախմբերի ստեղծման համար: Կար ժամանակ, որ գրեթե բոլոր դպրոցներում երգչախմբեր էին գործում: Սակայն դրանք փակվեցին ու անգամ երաժշտության դասաժամերը կրճատվեցին կամ փակվեցին: Հայ դպրոցում երգչախումբը մեծ դեր կարող է խաղալ դպրոցականների գեղագիտական դաստիարակության հարցում: Այս փառատոն-մրցույթը յուրովի հարգանքի տուրք է երգչախմբային արվեստում իրենց լուման ներդրած անվանի երախտավորների՝ դիրիժոր, խմբավար, կոմպոզիտոր Արամ Տեր-Հովհաննիսյանին, Թաթուլ Ալթունյանին: Փառատոնի օրերին կլինի նաեւ անակնկալ՝ «Կապելլայի» գեղղեկ եւ դիրիժոր մաեստրո Հովհաննես Չեքիջյանին կմեծարեն ու փառատոնի հանդիսավոր փակման արարողությանը պետական երգչախումբը հանդես կգա հատուկ ծրագրով: Հոկտեմբերի 14-ին Արամ Խաչատրյան համերգասրահում «Հայաստանի փոքրիկ երգիչներ»-ի ելույթով կազդարարվի փառատոնի գալա համերգն ու մրցանակների հանձնման արարողությունը, որը դարձել է ամենամյա ու Հայաստանում է իրականացվում ՌՀՄ, ՀՀԿ-ի նախագահ Արա Աբրահամյանի ներկայությամբ:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Օրեր հայրենիքում՝ որպես ստեղծագործական խթան

Օրերս Երեւանում էր Հայաստանում, Սփյուռքում ճանաչված մտավորական, թատերական գործիչ **Ռոբերտ Առաքելյանը**: Ծնունդով Լոռվա աշխարհի Դսեղ գյուղից, Երեւանի գեղարվեստաթատերական պետական ինստիտուտի (Հրաչյա Ղափլանյանի դասարան) շրջանավարտ, ապա՝ Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դերասան, Ռոբերտ Առաքելյանը 1993-ից բնակություն է հաստատել Լիբանանում: Նրա մեկնումն, աներկբայորեն, կորուստ էր հայրենիքի թատրոնի համար, սակայն անուրանալի է այն փաստը, որ ի դեմս նրա՝ լիբանանահայ համայնքը ձեռք բերեց կարկառուն նվիրյալ եւ բարձրարժեք թատերական գործիչ: Այսօր Ռոբերտ Առաքելյանի իր ծավալուն թատերական-մանկավարժական-կազմակերպչական գործունեությամբ հայտնի է նաեւ Հայաստանում: 2009-ին Թատրոնի միջազգային օրվա առիթով ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից նա պարգեւատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:



*Ռոբերտ Առաքելյան*

Ռոբերտ Առաքելյանը տարիների ընթացքում եղել է Այնճարի Համազգայինի «Լուսարձակ-40» թատերախմբի ղեկավար, հիմնադրել է «Սուրեն Քոչարյան» ասմունքի խումբ, «Լեւոն Շանթ», «Լորիկ», «Երազ» եւ այլ թատերախմբեր Այնճարի եւ Բեյրութի մի շարք վարժարաններում: Ներկայումս ճանաչված մանկավարժն ու բեմադրիչը դասավանդում է «Թատրոն» վարժարանում, Համազգայինի ճեմարանում, «Թորոսյան» վարժարանում, Հայ ավետարանական կենտրոնական բարձրագույն վարժարանում եւ Համազգայինի «Լեւոն Շանթ» կենտրոնի թատերական «Արեգ» դպրոցում, լինելով համանուն թատերախմբի ղեկավարը: Նշելի է, որ բեմադրիչը նաեւ «Գասպար Իփեկյան» մեծերի թատերախմբի ղեկավարն է: Այդ բոլոր՝ թե՛ մանկապատանեկան, թե՛ մեծերի թատերախմբերը պարբերաբար հանդես են գալիս Այնճարում, Զահլեում, նաեւ՝ հյուրախաղերով Սիրիայում, Կիպրոսում, Հայաստանում: Հիշարժան է այն փաստը, որ Ռոբերտ Առաքելյանը հաճախ հանդիսանում է նաեւ իր բեմադրած թատերգությունների հեղինակը (շուրջ 30 պիեսների), նաեւ հեղինակ է հոդվածների, «Անցյալի հետքերով» գրքի եւ «Արեգ» թատերական դպրոցի համար ստեղծած երկու դասագրքերի: Ռոբերտ Առաքելյանի գործունեությանն անդրադարձել են ոչ միայն Լիբանանի եւ Հայաստանի մամուլը, այլեւ անվանի հայ մտավորականներ, գրողներ, դերասաններ: 1996-ին Այնճար այցելելուց հետո Սիլվա Կապուտիկյանը գրել է. «Ռոբերտ Առաքելյանի բոլոր սաներն էլ հիանալի արտասանեցին իմ բանաստեղծությունները, խոր զգացմունքայնությամբ»: Երկու տարի անց նույն թատերախմբի («Լուսարձակ-40») ասմունքային ելույթից հետո, Գեւորգ Էմինը հուշամատյանում արձանագրել է. «Ինձ պարզապես ցնցեց իմ բանաստեղծությունների այսքա՜ն բարձրաճաշակորեն արված կոմպոզիցիան: Իսկ ասմունքը՝ անկեղծ էր, գրական գործի ճշմարիտ զգացողությամբ: Լիբանանում մեծ գործ է անում մեր հայրենակից Ռոբերտ Առաքելյանը»: Բեմադրիչի վառ ձիրքը բարձր է գնահատել ՀՀ ժողովրդական արտիստ, անվանի ռեժիսոր Երվանդ Ղազանչյանը: Իսկ ՀՀ ժողովրդական արտիստուհի Վարդուհի Վարդերեսյանը ասել է. «Ես տրիս գոհունակությամբ հանդես եկա Ռոբերտ Առաքելյանի ղեկավարած «Լուսարձակ-40» թատերախմբի հետ Բեյրութում եւ Այնճարում: Ուրախալ ներկայացում, լավ բեմադրություն, նրբաճաշակ բեմադրիչ» («Ազդակ» թերթ, 17.10 2005 թ. Բեյրութ):



*Տեսարան «Բարեւ կռունկներ» բեմադրությունից*

Պատմելով լիբանանյան կյանքի մասին, Ռոբերտ Առաքելյանը ասում է. «Պետք է անաչառ կերպով գնահատել եւ հավուր պատշաճի արժեւորել այն, ինչ անում է Համազգայինի լիբանանյան շրջանային վարչությունը: Մեծ գործ է արվում մշակույթի բնագավառում՝ թե՛ քանակի, թե՛ որակի առումով: Իսկ բարդություններ, խնդիրներ կան ամեն տեղ: Օրինակ, Սփյուռքում հայ թատրոնի դերը եւ պարտավորվածությունը դուրս են զուտ մշակութային, գեղարվեստական խնդիրների շրջանակից: Նաեւ եւ առաջ դա՝ հայապահպան, ազգապահպան, պահանջատիրական ոգու խնդիր-առաքելություն է (քանի որ այսպես թե այնպես առկա է նաեւ ազգի ուծացման գերխնդիրը): Ասեմ նաեւ, որ Լիբանանում այդ ազգային ոգու պահպանման առաքելությունը կատարում է նաեւ հայրենի անվանի բեմադրիչ Երվանդ Ղազանչյանի ղեկավարած Հ. Ե. Ընկերակցության «Վահրամ Փափազյան» թատերախումբը: Անշուշտ, ընդհանուր դաշտում կան նաեւ որոշ քննադատելու բաներ: Բայց համոզված եմ, որ ամենակարեւորը՝ ո՛չ թե քննադատելն է, այլ՝ գործ անելը, ստեղծելը, մինչ ուժը դա՛ է: «Ավելի լավ է մի մոմ վառել, քան անընդհատ խավարն անիծել»՝ սա շատ իմաստուն հին չինական ասույթ է, ես ջանում եմ միշտ հարազատ մնալ նման դիրքորոշմանը», ասում է Ռոբերտ Առաքելյանը:

Ուշագրավ է, որ տեղեկանալով Երեւանում իր ներկայացման մասին, Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնի գլխավոր ռեժիսոր Ռուբեն Բաբայանը առաջարկեց նրան մի պիես գրել: Ռոբերտ Առաքելյանը սիրով եւ պատրաստակամությամբ արձագանքելով այդ առաջարկին, օրերս գրեց «Տարեդարձի նվերը» թատերգությունը, որն արժանանալով Ռուբեն Բաբայանի բարձր գնահատանքին, շուտով բեմադրվելու է տիկնիկային թատրոնում ու ներկայացվելու այդ թատրոնի՝ ԱՄՆ-ում կայանալիք մոտալուտ հյուրախաղերին: «Ուրախ եմ նման ստեղծագործական ընթացք ունեցող իմ երեւանյան այս օրերի համար: Արվեստագետը միշտ պիտի զգա իրեն ստեղծագործական ընթացքի մեջ: Ինձ համար ստեղծագործական ընթացքը՝ նաեւ մարդկանց հետ շփվելն է, փողոցով քայլելը, նոր բան տեսնելը... Դա էր պատճառը, որ այս օրերին ես այցելեցի մեր պատմական Անին: Իմ հայրենիքը՝ ե՛ւ Դսեղն է, ե՛ւ Երեւանն է, ե՛ւ Անին է... Ես հարուստ եմ իմ Հոգեւոր Հայրենիքով, որը խթանում է ինձ ստեղծագործել եւ ապրել որպես հայ մարդ, հայ արվեստագետ», եզրահանգում է Ռոբերտ Առաքելյանը:

**ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

# Փառատոների շքերթը շարունակվում է

**Մեզանում գարնանը ու աշնանը մշակութային կյանքը դառնում է շատ հագեցած: Իրար են հաջորդում փառատոները, որոնցից շատերը զուտ ժամանակ ու դրամ մսխելու համար են ստեղծվում: Ինչեւէ. աշնանային փառատոների շքերթը բացված է ու մինչեւ տարվա վերջ մոտ 10 փառատոն կանցկացվի: Սեպտեմբերի 14-19-ը կմեկնարկի «Ռեանիմանիա» անիմացիոն ֆիլմերի միջազգային 3-րդ փառատոնը, որի կազմակերպիչներ Վրեժ Քասունին, Կինոկենտրոնի տնօրեն Վարդան Աբովյանը երեկ մանրամասն ներկայացրեցին ողջ ծրագիրը: Մինչեւ այժմ ստացվել է 320 հայտ՝ 40 երկրներից, նշեցին կազմակերպիչները: Փառատոնի ծրագրում կլինեն մրցութային ծրագրեր, մանկական ծրագիր, «Տաղանդների որս» եւ այլն: Անիմացիոն ֆիլմերը կցուցադրվեն «Մոսկվա», «Նաիրի» կինոթատրոններում, Տիկնիկային թատրոնում եւ Նարեկացի մշ. կենտրոնում: Կլինեն նաեւ բացօթյա ցուցադրություններ Սիրահարների այգում: Բացի մրցութային լիամետրաժ, կարճամետրաժ ֆիլմերից, մեծ տեղ է հատկացվելու 74-ամյա պատմություն ունեցող աշխարհի անիմացիոն ֆիլմերին: Իսկ առանձին «20-ամյա հայկական անիմացիա» ծրագրով կներկայացվի Հայաստանում անիմացիայի զարգացումը: Կլինեն հոբելյանական ու հիշատակի երեկոներ, կանցկացվեն վարպետության դասընթացներ հատուկ անիմատորների, լրագրողների, նկարիչների համար, արտերկրից հրավիրված անիմացիայի մասնագետների դասվարությամբ: Կինոկենտրոնի հետ համատեղ անցկացվող «Տաղանդների որս» ծրագրի ընթացքում մրցանակ կտրվի անցած տարվա փառատոնի «Խավարասերը» կարճամետրաժ ֆիլմին, որը կներկայացվի կինոսիրողների ուշադրությանը:**

**Մ. Մ.**

# «Սահման» ֆիլմը եւս երեք մրցանակ բերեց

**Օգոստոսի 27-ից սեպտեմբերի 4-ը Մոսկվայում տեղի ունեցավ Ազգային կինեմատոգրաֆիաների հերթական՝ 15-րդ ֆորումը, ուրն ամեն տարի անց է կացվում Կինեմատոգրաֆիստների միությունների կոնֆեդերացիայի կողմից: Ֆորումին մասնակցում են ԱՊՀ եւ Բալթիայի երկրները, ինչպես նաեւ Վրաստանը: Հայաստանից այս տարի ֆորումին էր ներկայացված Հարություն Խաչատրյանի «Սահման» ֆիլմը, որն արդեն հասցրել է մասնակցել բազմաթիվ միջազգային փառատոների եւ շահել մեկ տասնյակից ավել մրցանակներ: Այս անգամ եւս ֆիլմը արժանացավ երկու մրցանակի եւ մեկ դիպլոմի: Ֆորումի ժյուրին՝ անվանի կինոռեժիսոր Վադիմ Աբդրաշիտովի գլխավորությամբ ֆիլմին շնորհեց Հատուկ մրցանակ: Իր մրցանակը Սահման ֆիլմին հանձնեց նաեւ Ռուսաստանի կինոակումբների ֆեդերացիան, իսկ Մոսկվայի «Ազգությունների տունը» ֆիլմին շնորհեց դիպլոմ՝ «Ազգերի միջեւ մշակութային երկխոսության եւ փոխըմբռնման գործում ներդրման համար»:**

*«Ոսկե ծիրանի» մամուլի ծառայություն*

# Էլինա Դանիելյանը կմասնակցի Գրան պրիի 2-րդ փուլին

Այսօր Չինաստանի Շենչժեն քաղաքում մեկնարկում է շախմատի կանանց Գրան պրիի խաղարկության 2-րդ փուլը: Մրցաշարի մասնակից 12 շախմատիստուհիների թվում է Էլինա Դանիելյանը, որն իր վարկանիշով (2517) 5-րդն է: Էլինայից ավելի բարձր վարկանիշ ունեն աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Հոու Յիֆանը (2578), Սլովենիան ներկայացնող Աննա Մուզիչուկը (2545), չինացի շախմատիստուհի Ցզյույ Վենցզյունը (2536) եւ Եվրոպայի չեմպիոնուհի Վիկտորիա Չմիլիտեն (2525) Լիտվայից: Վերջինիս հետ Էլինան Մոսկվայում մասնակցեց Միխայիլ Բոտվիննիկի հուշամրցաշարին: Նրա հետ անցկացրած արագ շախմատի 2 պարտիաներից առաջինում Էլինան հաղթեց, երկրորդում՝ պարտվեց:



Բացի նշված շախմատիստուհիներից, Գրան պրիի խաղարկությունում հանդես կգան նաեւ ռուսաստանցիներ Ալիսա Գալյամովան (2498) եւ Եկատերինա Կովալեւսկայան (2421), չինացիներ Չժաո Սյուեն (2497) եւ Ժուան Լուֆեյը (2477), Քաթարը ներկայացնող Չժու Չենը (2490), մոնղոլ Բաթխույագ Մոնգոնտուլը (2465) եւ թուրք Բեթյուլ Ջիլդիզը (2308):

Հիշեցնենք, որ շախմատի կանանց Գրան պրիի խաղարկության առաջին փուլը կայացել էր օգոստոսին Դոնի Ռոստովում: Այնտեղ հանդես եկած 12 շախմատիստուհիներից միայն 6-ն են խաղալու Չինաստանում: Բացի Դանիելյանից, 2-րդ մրցաշարը կանցկացնեն նաեւ Հոու Յիֆանը, Աննա Մուզիչուկը, Ալիսա Գալյամովան, Ժուան Լուֆեյը եւ Եկատերինա Կովալեւսկայան:

Շախմատասերներին հիշեցնենք, որ Գրան պրիի խաղարկությունը բաղկացած է 6 փուլից եւ մասնակիցներից յուրաքանչյուրը պետք է հանդես գա 4 մրցաշարում: Փուլերից մեկը հաջորդ տարի կայանալու է Ջերմուկում: Հաղթողը որոշվելու է լավագույն արդյունքի հասած 3 մրցաշարերի ընդհանուր ցուցանիշներով:

Ցավոք Էլինա Դանիելյանը շատ անհաջող հանդես եկավ Ռոստովում կայացած Գրան պրիի առաջին փուլում: Նա 11 հնարավորից վաստակեց 5 միավոր եւ գրավեց 9-րդ տեղը: Այդ արդյունքի համար նա Գրան պրիի մրցաշարի հաշվարկով իր օգտին ընդամենը 45 միավոր գրանցեց: Համեմատության համար նշենք, որ մրցաշարի հաղթող, աշխարհի չեմպիոնուհի Հոու Յիֆանը, որ 11 հնարավորից 8 միավոր էր վաստակել, Գրան պրիի հաշվարկով 160 միավոր ստացավ: 2-րդ տեղը գրաված Կատերինա Լահնոն ունի 130 միավոր, 3-4-րդ տեղերը բաժանած Աննա Մուզիչուկն ու Տատյանա Կոսինցեւան վաստակել են 100-ական միավոր:

Ռոստովում Դանիելյանը միայն 3 հաղթանակ տոնեց Ալիսա Գալյամովայի, Եկատերինա Կովալեւսկայայի եւ Ալեքսանդրա Կոստենյուկի հետ պարտիաներում: 4 մրցախաղում գրանցվեց ոչ-ոքի, իսկ Հոու Յիֆանի, Կատերինա Լահնոյի, Անաստասիա Ստեֆանովայի եւ Ժուան Լուֆեյի հետ պարտիաներում Էլինան պարտվեց: Հուսանք, որ Չինաստանում Դանիելյանը հաջող կխաղա ու կբարելավի իր ընդհանուր ցուցանիշը:

# Ադամեկը խոստացել է ավարտել Կլիչկոյի չեմպիոնական կարիերան

Սեպտեմբերի 10-ին Լեհաստանի Վրոցլավ քաղաքում գերծանրքաշային կարգում WBC-ի վարկածով բռնցքամարտի աշխարհի ներկայիս չեմպիոն Վիտալի Կլիչկոն իր տիտղոսի հերթական պաշտպանությունը կիրականացնի: Նրա մրցակիցը կլինի լեհ բռնցքամարտիկ Թոմաշ Ադամեկը, որը քաշային երկու կարգերում նախկինում նվաճել է աշխարհի չեմպիոնի տիտղոսը:




Ընդունված կարգի համաձայն մենամարտից առաջ կայացել է բռնցքամարտիկների եզրափակիչ մամուլի ասուլիսը:

«Հիանալի մարզավիճակում եմ ,ինչպես միշտ վստահ եմ ուժերիս: Շաբաթ օրվա մենամարտում նպատակս է մեկ անգամ եւս ապացուցել, որ արժանիորեն եմ կրում աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Նախորդ մենամարտում Օդլանիեր Սոլիսը ռինգից պարտված հեռացավ արդեն 1-ին ռաունդում: Այն ժամանակ խոստացել էի մրցակիցներիս չդիմչել առաջին 9 ռոպեներին: Սակայն այժմ որոշումս փոխել եմ: Այնպես որ, Թոմաշին խորհուրդ կտամ չթուլանալ: Դու ինձ ինչ-որ առումով նույնիսկ դուր ես գալիս: Հնարավոր է, որ մենամարտից հետո նույնիսկ բարեկամանանք: Սակայն մենամարտի ժամանակ նման բան չի կարող լինել, քանի որ դու ցանկանում ես խլել այն, ինչն ինձ է պատկանում: Հուսով եմ, որ մենամարտն արագ կավարտեմ», հայտարարել է Վիտալի Կլիչկոն:

«Գիտեմ, թե ինչպես հաղթեմ Կլիչկոյին: Գիտեմ, որ նա աշխարհի չեմպիոնն է, սակայն վստահ եմ, որ շաբաթ օրը գլխավերեւումս կպահեմ չեմպիոնական գոտին: Հավատացեք ինձ, դա կլինի: Յուրաքանչյուր պատմություն մի օր ավարտվում է: Նրա չեմպիոնական հեքիաթն էլ կավարտվի շաբաթ օրը: Ուշադրություն չեմ դարձնում բուքմեյքերների խաղադրույքներին: Կլիչկոյի համար խաղադրույք կատարողները 1,15 գործակցով կարող են շահել, իսկ իմ դեպքում նրանք իրենց գումարը 5-6 անգամ կավելացնեն: 8 տարի առաջ ոչ մեկը ոչ մի հնարավորություն չէր տալիս Կորի Սանդերսին: Նրա հաղթանակին ավելի քիչ թվով մարզասերներ էին հավատում, քան իմ հաջողությանը: Սակայն Սանդերսը նոկաուտի ենթարկեց Վլադիմիր Կլիչկոյին: Նույնը պատահեց նաեւ Կրիս Բյորդի հետ: Իսկ ինչու այդ պատմությունը չի կրկնվի իմ հետ: Շատ եմ հարգում Վիտալիին, որը 37 տարեկանում վերադարձավ ռինգ ու դարձավ աշխարհի չեմպիոն: Ամեն ինչ կանեմ, որպեսզի չեմպիոնական գոտին մնա Լեհաստանում», ի պատասխան Կլիչկոյի, նշել է Թոմաշ Ադամեկը:

Նշենք, որ այդ մենամարտը կայանալու է Վրոցլավի քաղաքային մարզադաշտում, որը շահագործվել է այս տարվա հունիսին եւ կառուցվել է հատուկ ֆուտբոլի Եվրոպայի առաջնության համար: Մարզադաշտի 42 հազար տոմսերն արդեն վաճառվել են: Մնացել են միայն 1000 դոլար արժողությամբ թանկարժեք օթյակների տոմսերը:

# Ուժեղագույնները շարունակում են պայքարը

Թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնությունում 3-րդ փուլի արգելքն էլ հաջողությամբ հաղթահարեցին հաղթողի գլխավոր հավակնորդները:

Տղամարդկանց մրցաշարում հայտնի են քառորդ եզրափակիչի առաջին 4 մասնակիցները: Ռոջեր Ֆեդերերը պայքարից դուրս մղեց Խուան Մոնակոյին (6-1, 6-2, 6-0): Հաջորդ փուլ մտավ նաեւ Նովակ Ջոկովիչը՝ պարտության մատնելով Ալեքսանդր Դոլգոպոլովին (7-6, 6-4, 6-2): Ժո Ուիլֆրիդ Տսոնգայի եւ Մարդի Ֆիշի մրցավեճում հաղթողն ի հայտ եկավ 5 խաղափուլից հետո: Հաջողությունն ուղեկցեց Տսոնգային: Յանկո Տիպսարեւիչն էլ 4 խաղափուլում առավելության հասավ Խուան Կառլոս Ֆեռերոյի նկատմամբ:

Կանանց մրցապայքարում հերթական հաղթանակը տոնեց Կարոլին Վոզնյացկին՝ պարտության մատնելով Սվետլանա Կուզնեցովային (6-7, 7-5, 6-1): Սերենա Ուիլյամսից ընդամենը 2 խաղափուլ պահանջվեց Աննա Իվանովիչին հաղթելու համար (6-3, 6-4): Քառորդ եզրափակիչ են մտել նաեւ Անդրեա Պետկովիչը, Անաստասիա Պավլյուչենկովան, Անգելիկա Կերբերը, Ֆլավիա Պենետան, Սամանտա Ստոսուրը եւ Վերա Զվոնարյովան:

# Ռոյ Քինը թերեւս գլխավորի Իսլանդիայի հավաքականը

**Իռլանդիայի հավաքականի եւ «Մանչեսթեր Յունայթեդի» նախկին կիսապաշտպան Ռոյ Քինը, որին հունվարին ազատել էին «Իպսվիչի» գլխավոր մարզչի պաշտոնից, գուցե գլխավորի Իսլանդիայի հավաքականը: 40-ամյա մասնագետը բանակցում է այդ երկրի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարության հետ: Նա պատրաստվում էր ներկա գտնվել երեկ Ռեյկյավիկում կայացած Իսլանդիա-Կիպրոս ընտրական հանդիպմանը:**

**Իսլանդիայի հավաքականը գլխավորող Օլաֆուր Յոհաննեսոնի պայմանագրի ժամկետն ավարտվում է հոկտեմբերին եւ նա պատրաստվում է հեռանալ: Յոհաննեսոնն արդեն 4 տարի գլխավորում է իսլանդացիներին:**

ՖՈՒՏԲՈԼ

# Հաղթական հաշիվը պահպանել չհաջողվեց

Երեկ ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականը Եվրո-2013-ի ընտրական մրցաշարի 3-րդ տուրում հյուրընկալվել էր Չեխիայի իր հասակակիցներին: Համառ մրցապայքարում անցած հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1: Առաջինը հաջողության հասան հայ ֆուտբոլիստները: 55-րդ րոպեին խաղընկերների կազմակերպած գրոհը դիպուկ հարվածով եզրափակեց Էդգար Մալաքյանը: Բաց թողած գոլից հետո դաշտի տերերը դիմեցին վճռական գործողությունների և 68-րդ րոպեին Վլադիմիր Դարիդան վերականգնեց հավասարակշռությունը:

ՀՀ հավաքականը 3 խաղում վաստակած 7 միավորով շարունակում է գլխավորել ընտրական 3-րդ խմբի աղյուսակը: Չեխերը 2 խաղից հետո 4 միավոր ունեն:

# Արայիկ Բաղդասյանը կատարեց իր ընտրությունը

**Սեպտեմբերի 12-18-ը Ստամբուլում կանցկացվի ըմբշամարտի աշխարհի հերթական առաջնությունը: Այն նախորդներից կտարբերվի պայքարի թեժությամբ, քանի որ բացի առաջնության մեդալներից, խաղարկվելու են նաեւ 2012-ի Լոնդոնի ամառային օլիմպիական խաղերի ուղեգրերը: Դրանց կարժանանան այն ըմբիշները, ովքեր քաշային իրենց կարգերում տեղ կզբաղեցնեն լավագույն հնգյակում:**

**Պատասխանատու այդ մրցումներին են լրջորեն նախապատրաստվում նաեւ հայ ըմբիշները: Օգոստոսի 31-ից Հայաստանի ազատ եւ հունահռոմեական ոճերի ըմբշամարտի հավաքականներն ուսումնամարզական վերջին հավաքն են անցկացնում Երեւանում: Նախապատրաստությունը կշարունակվի մինչեւ սեպտեմբերի 14-ը, որից հետո մեր ըմբիշները կմեկնեն մրցավայր:**

**Ազատ ոճի ըմբշամարտի հավաքականի գլխավոր մարզիչ Արայիկ Բաղդասյանն արդեն կողմնորոշվել է կազմի հարցում: Ստամբուլում մրցագորգ դուրս կգան Միհրան Ջաբուրյանը (55 կգ), Աշոտ Տերտերյանը (60 կգ), Դավիթ Սաֆարյանը (66 կգ), Մուսա Մուրթազալիեւը (74 կգ), Հաջիմուրադ Նուրմագոմեդովը (84 կգ), Հարություն Ենոքյանը (96 կգ) եւ գերծանրքաշային Ռուսլան Բասիեւը:**

# Արման Փաշիկյանը մոտեցել է առաջատարներին

**Խանտի Մանսիյսկում ընթացող շախմատի մրցաշարի 6-րդ տուրում Արման Փաշիկյանը սեւերով հաղթեց ռուսաստանցի Անդրեյ Օբոդչուկին եւ վաստակեց 4,5 միավոր: Նա մրցաշարի 154 մասնակիցների մեջ զբաղեցնում է 17-րդ հորիզոնականը: Հաջող խաղաց նաեւ ռուսաստանցի Օլեգ Պապայանը՝ հաղթելով իր հայրենակից Սերգեյ Կոնդակովին: Օլեգը 6 հնարավորից վաստակած 4 միավորով 33-րդ տեղում է:**

**Մրցաշարային աղյուսակը 5-ական միավորով գլխավորում են 9 շախմատիստներ:**

# Նախապատրաստությունը կշարունակեն Աբովյանում

**Բռնցքամարտի Հայաստանի ազգային հավաքականը շարունակում է նախապատրաստվել տարվա գլխավոր իրադարձությանը՝ սեպտեմբերի 26-ին Բաքվում մեկնարկելիք աշխարհի առաջնությանը: Օրերս հավաքականը վերադարձավ Իրանից, որտեղ տեղի բռնցքամարտի ընտրանու հետ համատեղ ուսումնամարզական 12-օրյա հավաք էր անցկացրել: Հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Մեհրաբյանը բռնցքամարտիկներին մի քանի օր հանգստանալու հնարավորություն էր տվել, իսկ այսօր նրանք կրկին կվերսկսեն մարզումները: Այս անգամ հավաքականը կհանգրվանի Աբովյանում, որտեղ մինչեւ սեպտեմբերի 21-ը ուսումնամարզական վերջին հավաքը կանցկացնի: Նախատեսվում էր, որ պետք է Հայաստան ժամանեին եւ մեր բռնցքամարտիկների հետ համատեղ մարզվեին Բուլղարիայի հավաքականի անդամները, սակայն վերջին պահին նրանք հրաժարվեցին այդ ծրագրից:**

**Ուսումնամարզական վերջին հավաքին Ռաֆայել Մեհրաբյանն ընդգրկել է 22 բռնցքամարտիկի, որոնցից կընտրվեն այն 9 լավագույնները, որոնք Հայաստանը կներկայացնեն Բաքվում կայանալիք աշխարհի առաջնությունում: Նշենք, որ ըմբիշներից հետո հայ բռնցքամարտիկները կլինեն երկրորդը, որ հանդես են գալու Բաքվում: Այստեղ բացի աշխարհի առաջնության պարգեւներից, կվիճարկվեն նաեւ Լոնդոնի օլիմպիադայի ուղեգրերը:**

# Մարտիրոսյան-Պիրոգ մենամարտը մեծ հետաքրքրությամբ է սպասվում




Ինչպես տեղեկացրել ենք, սեպտեմբերի 25-ին Կրասնոդարում Գենադի Մարտիրոսյանը միջինքաշային կարգում WBO-ի վարկածով բռնցքամարտի աշխարհի չեմպիոնի տիտղոսը կվիճարկի չեմպիոնական գոտու տեր, ռուսաստանցի Դմիտրի Պիրոգի հետ: Այդ հանդիպումը մեծ հետաքրքրություն է ներկայացնում Կրասնոդարում: Դրա վկայությունն է, որ 3 օրում մենամարտի տոմսերի կեսն արդեն վաճառվել է:

31-ամյա Գենադի Մարտիրոսյանը ծնվել է Երեւանում: Ներկայումս նա բնակվում է Սանկտ Պետերբուրգում եւ ներկայացնում է Ռուսաստանը: Պրոֆեսիոնալ ռինգում Գենադին 24 մենամարտերից շահել է 22-ը, կրել է 2 պարտություն:

Միջինքաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Դմիտրի Պիրոգը բնակվում է Գելենջիկում: Նա պրոֆեսիոնալ ռինգում առայժմ անպարտելի է՝ հաղթելով անցկացրած բոլոր 18 մենամարտերում:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Օրվա հետքերով

## Բացվեց «Ամերիաբանկի» «Վանաձոր» մասնաճյուղը

Սեպտեմբերի 6-ին «Ամերիաբանկն» իր հերթական մասնաճյուղը բացեց Վանաձորում՝ Տիգրան Մեծի 65 հասցեում: Տարածքը բարեկարգել ու վերակառուցման աշխատանքներն իրականացրել է «Կանակա» ԲԲԸ-ն՝ ժամանակակից չափորոշիչներին համապատասխան: Բանկը մասնաճյուղերի տեխնիկական բարձր հագեցվածությունը եւ սպասարկման որակը համարելով գլխավոր նախապայման՝ «Վանաձոր» մասնաճյուղը եւս ապահովել է բարձրակարգ, արդիական տեխնիկական միջոցներով: Կապը գլխամասային գրասենյակի հետ, ինչպես եւ մյուս մասնաճյուղերում, ապահոված է on-line ռեժիմով: Մասնաճյուղն իրականացնելու է գլխամասային գրասենյակի սպասարկման մակարդակին հավասար սպասարկում, մատուցելու է «Ամերիաբանկի» կողմից առաջարկվող բոլոր ծառայությունները, այդ թվում նաեւ բարձրակարգ ծառայություն պրեմիում հաճախորդների համար:



Մասնաճյուղի բացման արարողությանը ներկա էին Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը, Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր Կարեն Սարիբեկյանը, այլ պաշտոնատար անձինք, բանկի տնօրենությունն ու աշխատակիցները: Հյուրերին ներկայացվեցին «Վանաձոր» մասնաճյուղի կողմից առաջարկվող ծառայությունները, տարածքի ընձեռած հնարավորությունները, բարձրակարգ վերանորոգումը:

Ինչպես տեղեկացանք «Ամերիաբանկի» մանրածախ գործառնությունների գծով տնօրեն Վազրիկ Սեկոյանից, «Վանաձոր» մասնաճյուղը 8-րդն է, իսկ առաջիկայում նախատեսվում է նոր մասնաճյուղ բացել նաեւ Գյումրիում՝ նպատակ ունենալով քայլ առ քայլ մասնաճյուղեր ունենալ բոլոր մարզկենտրոններում: Ըստ Վ. Սեկոյանի՝ Վանաձորում ներկայացուցչություն ունենալու անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ հանրապետության երրորդ քաղաքում այստեղ գործառույթներ իրականացնելու լուրջ նախադրյալներ կան:

- Մասնաճյուղը կնպաստի նաեւ Վանաձորի տնտեսության զարգացմանը,- ասաց նա՝ տեղեկացնելով նաեւ, որ այս մասնաճյուղն առաջարկում է զեղչեր մի շարք ծառայությունների գծով:

Ընդ որում, զեղչերից կարող են օգտվել բոլոր այն իրավաբանական ու ֆիզիկական անձինք, ովքեր 2011-ի սեպտեմբերի 6-ից 30-ը ներառյալ կդառնան մասնաճյուղի հաճախորդ: Վ. Սեկոյանը հայտնեց, որ բանկի ուղղվածությունը մինչ այժմ կորպորատիվ է եղել, այժմ քայլ է կատարվում դեպի ունիվերսալ բանկ:

Բանկի գլխավոր տնօրեն **Արտակ Հանեսյանը** վստահեցրեց, որ «Ամերիաբանկը» մի շարք առավելություններ ունի, որոնցից կարելի է նշել կատարվող մեծ ներդրումները, մասնաճյուղերի տեխնիկական հանգեցվածությունը, եւ այն, որ փորձ է արվում հասնելու սպասարկման միջազգային չափորոշիչներին: Ըստ նրա, բանկն ունիվերսալ է եւ մատուցում է կորպորատիվ, ներդրումային ու մանրածախ բանկային ծառայություններ՝ տրամադրելով բանկային լուծումների ամբողջական փաթեթ:

«Ամերիաբանկի» «Վանաձոր» մասնաճյուղի կառավարիչ Վարդան Սարդարյանը եւս կարեւորեց մասնաճյուղի բացումը՝ վստահեցնելով, որ հաճախորդների հետ հարաբերությունները հիմնված են լինելու փոխադարձ հարգանքի վրա, ծառայությունները մատուցելու են բարձրակարգ: Առայժմ հաճախորդներին կսպասարկի 15 աշխատակից: Հետագայում, գործունեության ընդլայնմանը զուգահեռ, հնարավոր է նրանց թվի ավելացում:

Լոռու մարզպետը, զրուցելով լրագրողների հետ՝ նշեց, որ բանկերի յուրաքանչյուր նոր մասնաճյուղի բացում կարեւոր է, քանի որ նախադրյալներ են ստեղծվում մարզի տնտեսությունը զարգացնելու համար:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

## Միավորվեցին «Յուքոմը» եւ «Նետսիսը»

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի երկու խոշոր ընկերություններ՝ «Յուքոմը» եւ «Նետսիսը», որոշել են միավորվել: Այդ մասին երեկ հայտնեցին այդ ընկերությունների տնօրենները:

Ըստ «Յուքոմ» ընկերության տնօրեն **Հայկ Եսայանի**, միավորմամբ նախատեսվում է, որ կարագանա ինտերնետ կապը: Ընկերությունների միավորման հիմնական նպատակն է կայքերի տեղակայման (հոստինգ) ծառայությունների նոր որակ եւ հզորություններ ունենալը: «Միավորումը մեզ հնարավորություն կտա որոշ ռեսուրսներ տնտեսել, եւ ցանցի արագության բարձրացում է սպասվում: Սակագները չեն փոխվի, փոխարենը ինտերնետ կապի արագությունը կավելանա առնվազն 1,5-2 անգամ», նշեց տնօրենը: Նրա տեղեկացմամբ, «Յուքոմը» նպատակ ունի համատեղ ուժերով զարգացնել հոստինգը, ստեղծել նպաստավոր պայմաններ, որպեսզի հայկական կայքերի սեփականատերերը շահագրգռված լինեն տեղակայելու դրանք Հայաստանում:

«Նետսիս» ընկերության տնօրեն **Գեւորգ Գեւորգյանը** նշեց, որ միավորումը օրինաչափ է, արտասահմանյան երկրներում նման միավորումներ եղել են, իսկ արդյունքներն էլ դրական են: «Սա նորմալ գործընթաց է աշխարհում, երբ ինտերնետ մատակարարող ընկերությունները միավորվում են: Այս պարագայում մեր միավորման արդյունքում, մեր ընկերության մասնագետների վերջին 10-11 տարիների ընթացքում ձեռք բերած փորձը ծառայեցնելու ենք նույն բաժանորդների շահերին պարզապես «Յուքոմ» ընկերության կազմում»:

Տեղեկացվեց նաեւ, որ ընկերությունները կմիավորվեն «Յուքոմի» բրենդի ներքո, իսկ միավորման գործընթացը կտեւի շուրջ 6 ամիս: Ըստ «Յուքոմ»-ի տնօրեն Հայկ Եսայանի, երկու ընկերությունների միավորման հետեւանքով մենաշնորհ չի ձեւավորվի, քանի որ այսօր դաշտում գործում են եւս չորս խոշոր ընկերություններ:

Ա. Մ.

## «Հայաստանը կարեւոր երկիր է մեզ համար»

### *Նշեց «Կոտլեր Իմփեքթ» ընկերության տնօրենը*

**«Հայաստանյան մարկետինգի արդի հիմնախնդիրները» թեմայով երեկ հանդիպում-քննարկում տեղի ունեցավ «Կոնգրես» հյուրանոցում, որին մասնակցեցին Հայաստան ժամանած «Կոտլեր Իմփեքթ» ընկերության տնօրեն Ֆահիմ Կիպրիան եւ Հայաստանում մարկետինգի ոլորտում գործող մասնագետներ: Հանդիպումը տեղի էր ունենում այս տարվա նոյեմբերին նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով ԱՄՆ Հյուսիսարեւմտյան համալսարանի Ջ. Քելոգի մենեջմենթի բարձրագույն դպրոցի միջազգային մարկետինգի պրոֆեսոր, մարկետինգի դասական Ֆիլիպ Կոտլերի Հայաստան այցին նախորդող միջոցառումների շրջանակներում:**

**Ելույթ ունենալով բացման խոսքում՝ Ֆահիմ Կիպրիան նախ նշեց, որ Հայաստանն իրենց համար շատ կարեւոր երկիր է: Նա տեղեկացրեց, որ այդ հանգամանքով է պայմանավորված, որ Ֆիլիպ Կոտլերն այստեղ է ժամանելու 4 օրով, իսկ Մոսկվայում լինելու է 1 օրով: Նրա այցին նախորդող միջոցառումները նպատակ ունեն պարզելու, թե ի՞նչ բացեր կան Հայաստանում մարկետինգի ոլորտում: «Կոտլեր Իմփեքթ» ընկերության տնօրենը հայտնեց, որ Ֆիլիպ Կոտլերը հանդիպելու է Հայաստանի նախագահին, վարչապետին, նախարարներին, Երեւանի քաղաքապետին, ինչպես նաեւ հանրային սեկտորի ներկայացուցիչների հետ: Նա հանդիպում է ունենալու եւ դասախոսություն կարդալու ուսանողների համար: Ֆահիմ Կիպրիան տեղեկացրեց նաեւ, որ ծրագրվում է Հայաստանում բացել մարկետինգի գերազանցության կենտրոն, վերապատրաստել այս ոլորտի մասնագետներին:** Ա. Մ.

## Ցավակցություն

Արմենական-ՌԱԿ Հանրապետական վարչությունը խորապես ցավակցում է Հայ եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանին՝ իր սիրելի մոր՝ **Վարդանուշ Չուլջյանի** մահվան կապակցությամբ:

* * *

«Ազգի» խմբագրությունը միանում է ցավակցությանը:

## Ցավակցություն

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորատը իր խորին ցավակցությունն է հայտնում պետական, հասարակական անվանի գործիչ, դիվանագետ, Մանկավարժական համալսարանի նախկին ռեկտոր, պրոֆեսոր

**Կամո Ուդումյանի**

մահվան կապակցությամբ եւ վշտակցում է մերձավորներին:

## ՀՀ ԱՄՆ դեսպանատունը մրցույթի է հրավիրում

Ինտերնետային ծառայություններ մատուցող ընկերություններին:
Մրցութային փաթեթները կարող են ձեռք բերել Ամերիկյան 1 հասցեում,
ԱՄՆ դեսպանատան կենտրոնական մուտքից,
օգոստոսի 25-ից մինչեւ սեպտեմբերի 8-ը, ժամը 9:00 – 18:00-ն:

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ մշակույթի նախարարությունը տեղեկացնում է, որ 2012 թվականի «Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագրով ոչ պետական մամուլի հրատարակմանը պետական աջակցություն տրամադրելու նպատակով իրավաբանական անձանցից ընդունվում են հայտեր: Հայտերն ընդունվում են՝ հիմք ընդունելով հետևյալ չափորոշիչները.

1. առնվազն վերջին երկու տարվա ընթացքում պարբերաբար հրատարակվող թերթ կամ ամսագիր (բացառությամբ ազգային փոքրամասնությունների լեզուներով նոր ստեղծվող մամուլի),
2. հրատարակվող համարների թիվը տարեկան պետք է կազմի նվազագույնը՝ թերթի 12, ամսագրի՝ 4 համար (բացառությամբ նոր ստեղծվող ազգային փոքրամասնության լեզվով հրատարակվող մամուլի),
3. թերթը կամ ամսագիրը բովանդակային առումով պետք է համապատասխանի ստորև ներկայացվող ուղղություններին.

- ◆ գրական-մշակութային մամուլ
- ◆ գիտական և գիտահանրամատչելի մամուլ
- ◆ ՀՀ մարզերում հրատարակվող մամուլ
- ◆ մարզական մամուլ
- ◆ ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող մամուլ:

**Հայտերի ներկայացման կարգը**

Մամուլի հրատարակման պետական աջակցություն ստանալու համար հայտատուն ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ է (հասցեն՝ Երևան, Իսահակյան 28, հեռ.՝ 52-86-10) ներկայացնում հայտ, որին կցվում են՝

1. նախորդ տարվա ընթացքում հրատարակած մամուլի վերջին երկու համարների օրինակները (բացառությամբ ազգային փոքրամաս նությունների լեզուներով նոր ստեղծվող մամուլի),
2. թերթը կամ ամսագիրը հրատարակող իրավաբանական անձի պետական ռեգիստրի գրանցման վկայականը՝ իսկականը (վերադարձնելու պայմանով) և պատճենը,
3. ազգային փոքրամասնության համայնքի ընդհանուր ժողովի արձանագրության պատճենը:

Հայտերն ընդունվում են մինչև 2011 թվականի հոկտեմբերի 1-ը:

Ծանուցման պահանջներին չհամապատասխանող, ինչպես նաև ժամկետանց հայտերը չեն քննարկվում:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է ՀՀ ՄՆ ՄԾԻԳ-ԱՇՁԲ-16 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2011թ օգոստոսի 29-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն**

**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ՄՆ ՄԾԻԳ-ԱՇՁԲ-16**

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, որը գտնվում է ք. Երևան, Կառավարական 3 շենք հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում:

Պարզեցված ընթացակարգի գնման հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել *ՀՀ Արագածոտնի մարզի Դաշտադեմ համայնքի Դաշտադեմ ամրոցի վերականգնվելիք հատվածի հնագիտական պեղման աշխատանքների* ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար *ՀՀ Արագածոտնի մարզի Դաշտադեմ համայնքի Դաշտադեմ ամրոցի վերականգնվելիք հատվածի հնագիտական պեղման աշխատանքների ձեռքբերումը*:

Գնումները ֆինանսավորվելու են ՀՀ 2011 թ. պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետն է՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն, գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք, կարող են մասնակցել մրցույթին անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Պարզեցված ընթացակարգի հայտարարության հիման վրա Պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձևով ստանալ անվճար հրավեր:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Կառավարական 3 շենք հասցեով, 7-րդ հարկ, ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ, մինչև սույն հայտարարությունը հրապարակվելու պահից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 15:00-ն, և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Պարզեցված ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետում՝ 5 օրացուցային օրվա ընթացքում:

Պարզեցված ընթացակարգի հաղթող կճանաչվի Մասնակիցների բավարար գնահատված հայտերով՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցը:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

***ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ, Հեռ. 58 51 78***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝6.9.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: